



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

2256

# ՀԱՅԻՒԹ

Խորհրդոյն Ժողովոյ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ  
Հաստատեալ Մարդասիրական Ընկերու-  
թեան, յանուն Արքոյն Գրիգորի Լուսա-  
ւորչի ՚ի Բագու, հանդերձ յորդորա-  
բանութեամբ և ճառիւք ատենադպրի  
Սարգսի Վարշամեանց:

Վասն 1875 ամիս:



Բ. Ա. Գ. Ռ. Խ.

Հայոց Մարդասիրական Ընկերութեան Տպարանումը:

1876.

13558

# ՀԱՅՈՒԹԻՒՆ

Խորհրդոյն Ժողովոյ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ  
Հաստատեալ Մարդասիրական Ընկերու-  
թեան, յանուն Սրբոյն Գրիգորի Լուսա-  
ւորչին 'ի Բագու, վասն 1873 ամի, հան-  
դերձ յորդորաբանութեամբ և ճառիւք  
ատենապալի Վարդսի Վարչամեանց:

Մարդասիրութիւնը ընդհանուր պատուեր է,  
Աղջասիրութիւնը մասնաւոր պատուեր: Մարդասիրու-  
թիւնը սովորեցնումէ ամենայն մարդիկ սիրել, ո-  
րովհեան մեզ նման են, իսկ ազգասիրութիւնը  
մեր ազգայինները աւելի սիրելէ սովորեցնում: Ու-  
րեմն մարդասիրութիւնը աւելի հաստատումէ ազգա-  
սիրութիւնը քան թէ վերցնում: Որովհետեւ ամեն  
մարդոյ պարտքն է իւր ազգը սիրել, պաշտպանել,  
հոգալ և այս պարսպը առանց Ճանաչողութեան  
չի լինիլ, պէտքէ արդարութեամբ Ճանաչենք մենք  
մեր ազգի չափը սրբենք մեր մոքի աչքերը, որ չ'լի-  
նի թէ տգիտութեամբ մընացած չտեսնեն նորա-  
դեղեցիկ ձիրքերը և չլինի թէ շլացութիւնով կամ  
չափազանց տեսութիւնով տեսածներիս կերպա-  
րանքը այլայլի մեր սպիտակ տեսնենք: Այս եր-  
կու տեսակ նայուածքով Խորհրդական Անդամք  
իւրաքանչիւր տարի շրջաբերականներով և ընկերու-  
թեան հաշիւների միջոցաւ պարտաւորութիւն են

Дозволено Цензурою. Тифлисъ 19-го Февраля 1876 г.

Համարել բացայայտ կացուցանել առաջի ազգի և  
ընկերութեան բոլոր Անդամոց, գեղեցիկ գործու-  
նէութիւնները այն Անդամոց, որոնք ըստ չափու կա-  
րողութեան աշխատելին յօդուտ ընկերութեան,  
նմանապէս և մեր ազգի պահատութիւնները չպար-  
տրկելով յերեան են հանել մեր քրիստոնէական  
կեանքում աւսած և լսած ցած և անարդ բաները:  
Թեպէտ ազգի պահատութիւնները անդադար յիշելլ  
մարդոյ սիրո կ'կոտրէ, կ'թուլացնէ և կ'յուսահասաց-  
նէ, բայց միշտ գովելը սիրո կ'ուռցնէ, միտքը կ'կու-  
րացնէ և սնապարծ ազգասէր կ'շնէ:

**Ա.յս վերջին երեք տարվայ ընթացքում Խորհր-  
դական Անդամք ինչ գործ գործեցին Ձեզ յայտ-  
նի է, նոքա չեն կարող պարծենալ թէ իւրեանց  
պարտաւորութիւնը շարունակել են առանց պահա-  
տութեան, նոքա գործել են այնքան որքան կարողա-  
ցել են և որքան ընկերութեան դրամական միջոցնե-  
րը թշյլ են տուել. ուրեմն աւելորդ համարելով  
իւրաքանչիւր անդամոց ցոյց տուած գործունէու-  
թիւնը մանրամասն յայտնելը անդամք կամենում են  
այս անդամ կարծարօտ հաշիւ տալ Ձեզ:**

**Ա.հա եօթներրորդ տարեգարձն է ընկերութեան  
ընդհանուր ժողովի, իսկ երկոտասաններորդ տարին է  
նորա գոյութեան իւր հաստատութեան օրից սկսեալ.  
և ներկայ Խորհրդական Անդամոց ընտրողութեան  
երեք տարին լրանումէ: Այս վերջին երեք տարվայ  
ընթացքում մտել են ընկերութեան Անդամոց կարգը:  
1873 թուին 13 անփոփոխ և 18 տարեկան: 1874  
թուին 16 անփոփոխ և 55 տարեկան Անդամներ:  
իսկ որ ինչ վերաբերվումէ 1875 թուականին՝ Խոր-**

հրդական Անդամք պարտաւորեն հսմարում նոյն  
տարուայ ընթացքում դտած Անդամոց անունները  
յիշել պյատեղ:

ԳԱՆՉԱԿՈՒՄ:

**Ա.շատութեամբ Անփոփոխ Անդամոյ  
Ներսէսի Տէր Ներսէսեանց:**

**Ա. ԱՆՓՈՓՈԽՄԲ:**

- 1., **Տիկին Սօնայ Յովակիմեան Յովհաննեանց ոուր.**  
Գանձակեցի ՚ի յիշատակ միակ որդւոյ  
իւրոյ Սիմէօնի Յովհաննեանց . . . . 100.
- 3., **Մովսէս Սիմէօնեան Պապիկեանց, Գանձակ.** 100.
- 3., **Պոլկօվնիկ Թէյմուրազ-բէկ Մելքը-բէդ-  
լարեանց, կալուածատէր Ղարաջնար գիւ-  
ղեց մերձ ՚ի Գանձակ . . . . 100.**
- 4., **Եղիշէ Տիրացու Յովհաննէսեանց, Գան-  
ձակեցի վաճառական . . . . 100.**
- 5., **Վանաս Աւետիչ Զաւադեանց, Շուշեցի.** 100.

**Բ. ՏԱՐԵԿԱՆԻԲ:**

- 1., **Ստեփանոս Աւագ Քահանայ Տէր Ստեւ ոուր.**  
Փաննոսեանց, Գորեցի, թեմական վերա-  
տեսուչ հոգևոր գպրոցաց Տիկիս, վիճակի. 5.
- 2., **Գրիգոր Քահանայ Բարաքելսեանց, Կրօ-  
նուացց Գանձակայ Հոգևոր գպրոցի . . . . 5.**
- 3., **Գրիգորիոս Վարդապետ Տէր Յակոբեանց  
Երեանցի, միաբան Սրբոյ Եջմիածնի . . . . 5.**
- 4., **Աստուածատուր Վարդապետ Տէր Յարու-  
թիւնեանց, Սղնախեցի. . . . . 5.**

- |      |                               |                  |                      |
|------|-------------------------------|------------------|----------------------|
| 5.,  | <b>Մովսէս</b> Գրիգորեան       | Նպիսկոպոսեանց,   | ռուբ.                |
|      | գետաշէնցի,                    | օդնական          | թեմական              |
|      | տեսչի,                        | 'ի գանձակ        | վերա-                |
|      |                               |                  | 5.                   |
| 6.,  | <b>Մատոթեայ</b> Լաղարեան      | Աւալեանց,        | գան-                 |
|      | ձակեցի                        | վաճառական        | բնակվող              |
|      |                               | 'ի վեննա:        | 5.                   |
| 7.,  | <b>Բժշկապետ</b>               | Կարապետ          | Յարութիւնեան         |
|      | Քոչարեանց.                    | Տիխիսկեցի:       | 5.                   |
| 8.,  | <b>Եփրեմ</b> Եպիսկոպոսեանց    | Խաջակապ գիւղից   | 5.                   |
|      |                               | մերձ 'ի գանձակ,  |                      |
| 9.,  | <b>Յարութիւն</b> Մարտիրոսեանց | Հոգաբարձ. վանա-  | 5.                   |
|      |                               | կան զպրոցի սրբոց |                      |
| 10., | <b>Ստեփան</b> Յարութիւնեանց   | Թարգման,         | վանից.               |
|      |                               |                  | 5.                   |
| 11., | <b>Իւնիեր</b> Աւետիք          | Մնացականեան      | Նասիբ-               |
|      |                               |                  | եանց,                |
|      |                               |                  | գանձակեցի            |
|      |                               |                  | 5.                   |
| 12., | <b>Սերէյ</b> Նիկոլաիչ         | Ղալումեանց,      | Սևքար                |
|      | Գիւղից,                       | Ղաղախայ          | Նահանդի աստիճանաւոր: |
|      |                               |                  | 5.                   |
| 13., | <b>Իվան</b> Սերէյիչ           | Շահպարոնեանց,    | գան-                 |
|      | ձակեցի,                       | ուսանող          | 'ի ք. Օտէսայ:        |
|      |                               |                  | 5.                   |
| 14., | <b>Ուստում</b> Յովհաննէսեանց, | Հաջիշն Գիւ-      |                      |
|      | ղից,                          | մերձ 'ի գանձակ:  | 5.                   |
| 15., | <b>Յովհաննէս</b> Յարութիւնեան | Բաղդասար-        |                      |
|      | եանց,                         | գանձակեցի,       | Համարակալ            |
|      |                               | Փոթի-            |                      |
|      |                               | թիկիցեան         | Երկաթուղոյ           |
|      |                               |                  | կառավարու-           |
|      |                               |                  | թիւնում.             |
|      |                               |                  | 5.                   |
| 16., | <b>Վարդաղար</b> Գրիգորեան     | Բռագուլեանց      | 5.                   |
| 17., | <b>Պետրոս</b> Եղիազարեանց     |                  | 5.                   |
| 18., | <b>Գրիգոր</b> Մահտեսի         | Մկրտումեանց.     | 5.                   |
| 19., | <b>Կարապետ</b> Ժաթալեանց      |                  | 5.                   |
| 20., | <b>Յովհաննէս</b> Ոսկանեանց.   |                  | 5.                   |
| 21., | <b>Յարութիւն</b> Արիեանց      |                  | 5.                   |
| 22., | <b>Աղօմն</b> Արամեանց         |                  | 5.                   |
| 23., | <b>Արշակ</b> մահտեսի          | Յովսեփեանց       | 5.                   |

Գանձակեցի

- |      |                               |                    |       |
|------|-------------------------------|--------------------|-------|
| 24., | <b>Իվան</b> Պավլովիչ          | Մնացականեանց գան-  | ռուբ. |
|      | ձակեցի,                       | վաճառական          | 5.    |
| 25., | <b>Սերգեյ</b> Աթայեանց,       | Կալուածատէր        | 5.    |
| 26., | <b>Մինաս</b> Խոզբաշեանց,      | Շուշեցի վաճառակ.   | 5.    |
| 27., | <b>Գրիգոր</b> Տէր Պետրոսեանց, | Շուշեցի վաճ.       | 5.    |
| 28., | <b>Կոլեժակի</b> Ասսեսոր       | Նիգօլյա Նաղարիչ    |       |
|      |                               | Մէլիքեանց.         |       |
|      |                               | միանուագ           | 5.    |
| 29., | <b>Մբատ</b> Թէոդորեան         | Ներակունի Ալեքսան- |       |
|      | դրապօլցի                      | Դիչաղ Գիւղից.      | 5.    |
| 30., | <b>Գրիգոր</b> Վարդաղարեան     | Մկրտումեանց        |       |
|      | Գանձակեցի                     | վաճառական          | 5.    |

Գ: ՏԱՐԵԿԱՆ ԱՆԴԱՄԻ 1874 թուակ.,

որք հասուցելեն իւրեսանց տուրքը և 1875 թ.

- |      |                                   |                                  |    |
|------|-----------------------------------|----------------------------------|----|
| 1.,  | <b>Կապիտան</b> Աբրահամ Մէլիքեանց  |                                  | 5. |
| 2.,  | <b>Կարապետ</b> Աբրահամեան         | Տէր Ներսէսեանց                   | 5. |
| 3.,  | <b>Տէր</b> Դանիէլ                 | Տէր Բարաղամեանց                  | 5. |
| 4.,  | <b>Ղուբերնուի</b> Սեկր. Եփրեմ     | Ենդիբարեանց.                     | 5. |
| 5.,  | <b>Յովհաննէս</b> Բաղդեանց.        | Խաչակապցի                        | 5. |
| 6.,  | <b>Յովհաննէս</b> Փաթալեանց        |                                  | 5. |
| 7.,  | <b>Մկրտիչ</b> Մահտեսի             | Սարգսեան                         | 5. |
| 8.,  | <b>Ղահրաման</b> Սերգեյիչ          | Յովհաննէսեանց.                   | 5. |
| 9.,  | <b>Կոստանդին</b> Պավլովիչ         | Մէլիքեանց                        | 5. |
| 10., | <b>Մանուէլ</b> Ամիրիսանեանց       |                                  | 5. |
| 11., | <b>Սողոմոն</b> Երեցիոնեանց        |                                  | 5. |
| 12., | <b>Գրիգոր</b> Տէր Մէլիքսետեկեանց, | Շուշավերցի,                      |    |
|      |                                   | Վարժապետ Գետաշինի հոգեոր գպրոցի. | 5. |

՚Ի Բ Ա Գ Ո Ւ:

**Աշխատութեամբ Խորհրդական Անդամոց:**

**ԱՆՓՈՓՈԽԹ:**

- 1., Գրիգոր Առավելեանց. Շուշուայ քառ ռուբ. զաքացի, վաճառական . . . . . 100.
- 2., Մկրտիչ Յովհաննէս և եան Վարդանեանց 100.
- 3., Գրիգոր Սաղաթէլեան Ապանեանց 100.
- 4., Յովհաննէս Մովսէս և եան Միրզա-Աւագեանց 100.
- 5., Զաւադ Գրիգորեան Տէր Խարայէլեանց 100.
- 6., Միրզայ Դանիէլեան Աթամալեանց 100.
- 7., Միրզաջան Պատուականեան Պատուականեանց . . . . . 100.
- 8., Աստուածատուր Յակոբջանեան Թարվիզեանց . . . . . 100.
- 9., Յակոբ Սահակեան Ադամեանց . . . . . 100.
- 10., Մինսա Զաւատեան Մէլիքեանց . . . . . 100.
- 11., Ղազար Յովհաննէս և եան Մայիլեանց . . . . . 100.
- 12., Մարդարայ Վելիջանեան Ազատեանց 100.

՚Ի Մ Ո Ս Կ Ո Ւ Ա Յ:

**Աշխատութեան Անփոփոխ Անդամ պարոն  
Ահակայ Թաթոսեանցի:**

- 1., Աղեքսանդր Աւետիքեան Թարվիզեանց ռուբ. Շուշուայ քաղաքացի . . . . . 100.
- 2., Յովհաննէս Սահակեան Ժամհարեանց, Շուշուայ քաղաքացի . . . . . 100.
- 3., Կարասիմ Մինէիչ Կարսոյեանց, Տիկին սու քաղաքացի . . . . . 100.

**ՏԱՐԵԿԱՆՔ:**

- 1., Խորէն Վարդապետ Ստեփանէ, Հասոյց ռուբ. 1875 և 1876 թ. տուրքը . . . . . 10.
- 2., Վահան Վարդապետ Բաստամեանց, Հասոյց 1875 թ. տուրքը . . . . . 5.

՚Ի Բ Ա Գ Ո Ւ:

**Աշխատութեամբ Տարեկան Անդամոց  
պարոն Բաղդասարայ Շահկետանեանց:**

- 1., Կարապետ Աղամեանց . . . . . 5.
- 2., Զաւադ Բաղդասարեանց . . . . . 5.
- 3., Յարութիւն Թաթէոսեանց . . . . . 5.
- 4., Գէորգ Խախիսանեանց . . . . . 5.
- 5., Բաղասի Պօղոսեանց . . . . . 5.
- 6., Հայրապետ Սափարեանց . . . . . 5.
- 7., Յովհաննէս Սարգսեանց . . . . . 5.
- 8., Գրիգոր Սանամեանց . . . . . 5.
- 9., Աղաբէկ Տէր Յովհաննէս և եանց . . . . . 5.
- 10., Կարապետ Գրիգորեանց . . . . . 5.
- 11., Յակով Պօղոսեանց . . . . . 5.
- 12., Եգոր Յարութիւնեանց . . . . . 5.
- 13., Մկրտիչ Սարգսեանց . . . . . 5.
- 14., Սահակ Դաղաշեանց . . . . . 5.
- 15., Զահանգիր Ղէյվանդեանց . . . . . 5.
- 16., Բեղլար Վարդանեանց . . . . . 5.
- 17., Արշակ Մնացականեանց . . . . . 5.
- 18., Աղեքսանդր Շանշեանց . . . . . 5.
- 19., Աղեքսանդր Խուբեանց . . . . . 5.
- 20., Արքահամ Շահնազարեանց . . . . . 5.

21.,	<b>Մինաս</b> Գիւղատեանց	5.
22.,	<b>Խաշատուր</b> Վ.Լասեանց	5.

'ի ՑԱ.ՐՍԿԻ ԿՈՂՈԴՅԱՅ:

**Աշխատութեամբ Անփոփոխ Անդամոյ  
Ազնիւ Պրոտոպալովեանցի:**

1.,	<b>Մելքոյ</b> Ցակորեան Թաթէոսեանց Սղնաւ ռում. խեցի	5.
2.,	<b>Յովսէփ</b> Կրիգորեան Պատովեանց Սղնախեցի	5.
3.,	<b>Արտեմ</b> Սահակեան Սիմէօնեանց	" 5.
4.,	<b>Արտեմ</b> Արտեմիչ Օթարեանց	" 5.
5.,	<b>Արմեն</b> Ցակորեան Թաթոսեանց	" 5.

'ի Բ.Ա.Դ.Ռ. Խ:

**Աշխատութեամբ Խորհրդական Անդամոյ  
Գրիգորի Այլաղեանց:**

1.,	<b>Յարութիւն</b> Եղեազարեան Պոպովեանց	5.
2.,	<b>Յովհաննէս</b> Մկրտիչեան Շարաբանդեանց	5.
3.,	<b>Անաստաս</b> բէկ Տէր Առաքելեանց	5.
4.,	<b>Աղեկանդր</b> Յարութիւնեան Սերկչեանց	5.
5.,	<b>Յովհաննէս</b> Համբարձումեան Ղարակետեանց	5.
6.,	<b>Կարապետ</b> Մահաւեսի Մինասսեան Քօչարեանց	5.
7.,	<b>Գէորգ</b> բէկ Վարթանեան Վարթանեաց	5.
8.,	<b>Գրիգոր</b> Տէր Խորայէլեանց	5.
9.,	<b>Ցակոր</b> Տէր Խորայէլեանց	5.
10.,	<b>Գէորգ</b> Աբբահամեան Շահնապարեանց	5.
11.,	<b>Յովհաննէս</b> Սերկչեանց Շուշեցի	5.
12.,	<b>Գրիգոր</b> ՄերգաւԱւագեանց	5.
13.,	<b>Աղեկանդր</b> Մէլիք-Ազարեանց	5.

14.,	<b>Բաղդասար</b> Խաչատուրեան Շահկետանեանց	5.
15.,	<b>Յարութիւն</b> Ցակորջանեան Մելիքեանց	5.
16.,	<b>Խաչատուր</b> Գէորգեան Սերկչեանց	5.
17.,	<b>Գէորգ</b> Դանիէլեան Քիւրքչեանց	5.
18.,	<b>Դաւիթ</b> բէկ Աւան Խղբաշեանց	5.
19.,	<b>Սողոմոն</b> բէկ Ստեփանեանց	5.
20.,	<b>Համբարձում</b> բէկ Խղբաշեանց	5.
21.,	<b>Զաքարիայ</b> Մեսրովիւնեան Ալանեանց	5.
22.,	<b>Եղիայ</b> Ցարութիւնեան Պորտանովեանց	5.
23.,	<b>Յարութիւն</b> Թավաքալեանց	5.
24.,	<b>Ցակոր</b> Փիրզատեանց	5.
25.,	<b>Գրիգոր</b> Սաղաթէլեան Ալանեանց (*)	5.
26.,	<b>Աղեքանդր</b> Յարութիւնեան Ղարակետեանց	5.
27.,	<b>Մարտիրոս</b> Ստեփաննեան Խխոհիւնեանց	5.
28.,	<b>Յովհաննէս</b> Մկրտիչեան Եղնայեանց	5.
29.,	<b>Յովհաննէս</b> Մկրտիչեան Կուրկիննեանց	5.
30.,	<b>Երեմիայ</b> Դաւթեան Լազարեանց	5.
31.,	<b>Գարեթէլ</b> Յարութիւնեան Պորտանովեանց	5.

**Սիրելի Հանդիսականացդ արդէն յայտնի եղեւ վերաբերեալ անուանացուցակից, թէ՝ 'ի շարս միւս աշխատաւորաց, մեր քրանաջան Անփոփոխ Անդամ աղնիւ Ներսէս Տէր Ներսէսեանցը, որքան անձննքէ դտել անդամակցութեան: Այդ պարոնի գործունէութիւնը մի առ մի այս տեղ յիշելը Անդամք 'ի յարգանս նորա սուրբ ցանկութեան, աւելնորդ են համարում, սակայն պարտաւորված են առաջի առնել.**

(\*) Ծանօթուրիւն: պ. Գրիգոր Ալանեանցն չբաւականալով այս տուրբով, ինքնայօժար կամօր Անփոփոխ Անդամոց շարբը մտաւ Նուիրելով հարիւր բուրլի:

'ի տեղեկութիւն սիրելեացդ, քաղելով պ. Տէր Ներսէսեանցի և Խորհրդական Անդամոց մէջ եղած գրաւոր յարաբերութեանց, այն հանդամանքը որն որ վերաբերումէ Ընդհանուր ձողովոյ քննադատութեան և մեր Ընկերութեան գործոց շնութեան և յառաջադիմութեան: Պ. Տէր Ներսէսեանցը իւր, այս վերջին ժամանակում ստացած դրութեան մէջ, 'ի շարս այլոց յայտնումէ մեզ յետեւեալը:

„ 4. Յունվար ամսի 1876 թիւին հրաւիրեցի դանակակումը գտնուող Անփոփոխ և Տարեկան Անդամներին  
„ և նոքա միասին վերազննեցին դանձակայ վերաբերեալ իմ հաշիւը վասն 1975 ամի, որից երեաց:

Մ Ո Ւ Տ Ք:

„ Ա., Յորոդ ընտրեալ 5 Անփոփոխ Անդամոց միանուագ վճարքը հարիւրաւոր ռուբլի 500 ռ.	
„ Բ., Յընթացս 1875 ամի 30 հոդի նորէն ցանկացան լինիլ տարեկան Անդամիք ամէն մէկից 5 ռուբլի. . . . .	150 ռ.
„ Գ., 1874 թուակ. տարեկան Անդամներիցը 12 հոդի շարունակելով իրանց վճարագը ամէն մէկը 5 ռ. . . . .	60 ռ.
Հնդամենը. 710 ռ.	

Մ Ա Խ Ք:

„ Դ. Յիշեալ գումարէն 1875 ամի փոստայիւ և փոխանակագրով հասուցածեմ Ընկերութեան դանձարանին չորս հարիւր երեսուն ռուբլի . . . . .	430 ռ.
„ Ե. Յընթացս 1875 ամի արուածէ ծախս:	

ո.ու.ր.  
 „ 15 Փետ. Աստ առաջարկութեան տարեկան Անդամոց պ. Խաղօրի Յովհաննէսեանց երկու պսակուող աղքատ օրիորդաց կարիքը հոգալոյ համար տուածէ 10.  
 „ 17 „ Հանգուցեալ Կրիգոր Ապրեսովի մայր Շախանումին, որ յետին աղքտութեամբէ ապրում, տուածէ 4.  
 „ 20 „ Արբոց թարգմանչաց վանից դպրոցը ոչ մի տեղից համարեայ արդիւնք չունի և գիւղական խաչակապցի ժողովուրդը գոեհկութիւնից շատ սառնութեամբ են նայում իւրեանց որդոց ուսմանը, մինչեւ անգամ գիրք թանաք, գրիչ, թուղթ և այլ ուսանողական նպաստ առնելը, իրեւ անստվոր բան՝ նրանց ծանր էր թւում, թող թէ վանահօրը վայելուչ ռոճիկ տալը և 900 ամեայ մի նուիրական վանքի պահպանելը: Վասնորոց ժողովուրդի աչքը բանալոյ համար գէպ 'ի ուսումնասիրութիւնը և նոցա ջերմեռաննութիւնը շարժելու աղադաւ, Արբոց Վարդանանց զօրաւորաց տօնին գնացի այցելութիւն, և 'ի ներկայութեան հանդիսաւոր բազմականաց ընձայեցի Ընկերութեան կողմից 45 աշակերտաց, զանազան ուսանողական նպաստ . . . . . 30.  
 „ Վ անահայր ուսուցչին Թէոդորոս Վարդապետին . . . . . 32.

- „ Յատուկ վանքի եկեղեցւոյ համար ռուբ.  
 „ կարեսր անօթեղէն գնեցի . . . . . 8.  
 „ Որպիսի անցքը տպագրուածէ Ն 11  
 „ Մեղու Հայաստանի լրագրումը մանաւ  
 „ րամանն;  
 „ 10 Ապր. Աթոնց Պատուականի այրի կնոջը  
 „ և իւր որդւոյ ապրուստի համար ըստ  
 „ միջնորդութեան Պ. Նիկոլայ Մելիք-  
 „ եանցի ՚ի ձեռն Ս. Լազարիանցի  
 „ տուածէ . . . . . 10.  
 „ 14 „ Բատ դրութեան ժողովը Ընկերու-  
 „ թեան մարտի 26 էն, Ն 82, օրհնել  
 „ տուի հանգուցեալ Ախմէօն Օհանովի  
 „ գերեզմանը որոյ աղագաւ նուիրեցի  
 „ Քահանայից, տիրացուաց և ազքատաց 15.  
 „ 16 „ Նորաշէնի հանգուցեալ Եսայի Տէր  
 „ Խարայէլեանցի կնոջը իւր որբոց  
 „ ապրուստի համար . . . . . 2.  
 „ 22 „ Մի անցաւոր Գարաբաղցի չքաւոր  
 „ Քահանայի, ըստ միջնորդութեան Պ.  
 „ Խարայէլ բէկ Մամիկոնեանցի, տուածէ  
 „ Ճանապարհածախս. . . . . 3.  
 „ 4 Մայիս. Գետաշինու ծխական դպրոցի վար-  
 „ ժապետ Տէր Ախմէօն Աղիբեկեանցին,  
 „ որը աւելի քան 8 դարի սովորեց-  
 „ նումէ դիւղացի երեխանցը հայերէն  
 „ զրել կարդալը մի աննշան ռոճիկով,  
 „ իբրև Խարախուսանք, ընձայածէ Ըն-  
 „ կերութեան կողմից մի ոսկեզօծ  
 „ Ժամացոյց իւր շղթայիւ . . . . . 30.

- „ Նոյն օրը յանձնեցի իրան մի քանի ռ.  
 „ գրքեր, տողանոցներ, հայկական  
 „ գեղագրութիւն, ՚ի նպաստ աղքատ  
 „ աշակերտաց, արժողութիւնն է . . . . . 4.  
 „ 5 „ Եկեղեցւոյ քուչայումը բնակուող  
 „ հանգուցեալ Երեցփոխեանց Սարգիսի  
 „ կնոջը իւր որբովք, ըստ միջնորդու-  
 „ թեան տարեկան Անդամոյ պ. Սողոմոնի  
 „ Երեցփոխեանց օգնութիւն հասածէ 10.  
 „ 5-8 Յունի. Պատ. Տարեկան Անդամոց Մովսիսի  
 „ Եպիսկոպոսեանց և Գաբրիէլի Հախու-  
 „ վերտեանց Հետ Ճանապարհորդե-  
 „ լով և անցնելով, Զարդախոլու, Գէ-  
 „ տարէկ, Փիփի, Խաչակապ գիւղերովը  
 „ Նուիրվածէ ՚ի նպաստ չքաւոր ռու-  
 „ սանողաց տեղական դպրոցների զա-  
 „ նազան նպաստ . . . . . 10.  
 „ 19 „ Փիփայ տղայոց և Խաչակապայ օրիւ-  
 „ որդաց դպրոցներին ըստ միջնորդու-  
 „ թեան տարեկան անդամոյ պ. Յովշ-  
 „ հաննէսիբաղիեանց նուիրածէ գրելու  
 „ թուղթ և 25 հատ գեղագրութիւն  
 „ արժողութիւնն է . . . . . 5 ռ. 50 կ.  
 „ Թէ՛կողոսս վարդապետ Շիրակունին  
 „ տուածէ 20 հատ հայկական գեղա-  
 „ գրութիւն վանական դպրոցի ընդու-  
 „ նակ աշակերտներին բաժանելու . . . . . 3 ռ.  
 „ 28 „ Տէր Մկրտչ Տէր Յովշաննէսեանց մաս-  
 „ նաւոր դպրոցին ՚ի կողմանէ Ընկերու-  
 „ թեան ողորկվածէ ընդ գրութեամբ  
 „ Ն 38, 30 հատ նոյն գեղագրու-

- „ թէնէն 'ի խրախոյս ընդունակ աշաւ  
„ կերտաց . . . . . 4 ռ. 50 կ.  
„ Մայիսի 22 Ընկերութեան 11-րորդ ռ.  
„ տարեգարձի հանդէսը կատարելու  
„ առթիւ զրիուածէ 'ի բազու հեւ  
„ ռադիր, շնորհաւորութեան, ծախսնէ 2.  
„ 10 Սեպ. Համաձայն վճռահատութեան Խոր-  
„ հրդոյ Ընկերութեան 'ի 19-էն Մայի-  
„ սի № 115, Պարավնարցի որբ Նիւ  
„ կողայոս Տէր Սողօմնեանցը ընդու-  
„ նուածէ 'ի շարս որդեգրաց Ընկերու-  
„ թեան 2 տարի ժամանակաւ, որոյ  
„ ապրուստի համար տարին 50 ռուբլի  
„ է նշանակուած, այս հաշվումը վեց  
„ ամսեայ վարձ վճարեցի Սարգիս  
„ Արզումանեանցին . . . . . 25.  
„ 26 „ Ըստ միջնորդութեան տարեկան ան-  
„ դամոյ բարեշնորհ Գրիգոր Քահանայի.  
„ Բարաքելսեանց, տուածէ հինգ  
„ ռուբ. Ճանապարհածախս Գանձակից  
„ մինչև 'ի Սուրբ Եջմիածին Հայոց հա-  
„ ստոր ընդունող տաճիկ Մահմուլին: 5.  
„ 28 Հոդ. Գետաբեկու ծխական դպրոցի ու-  
„ սուցիչ Գրիգոր Քահանային Նադիր-  
„ եանց ողորկեցի 22 օրինակ հայկա-  
„ կան գեղագրութիւն. . . . . 3 ռ. 30 կ.  
„ Օգոստոս ամսին բաժանուած է  
„ գետաշնումը 13 օր. գեղեգրութիւն  
„ աշակերտաց . . . . . 1 ռ. 95 կ.  
„ 15 „ Այս ամի Ապրելի 15-ից մինչև ի  
„ Օգոստոսի 15-ն, ուսմանումը սրբոց

- „ Թարգմանչաց վանքումը Հայոց լե-  
„ զուն և կրօնը և Սեպտեմբերի 1-ցն  
„ շարունակելուէ նոյն ուսումն մինչեւ  
„ 1-ն Յունիսի 1876 ամի, Բանանցայ  
„ դպրոցի մէջ միտաճիկ Զանկազուրցի  
„ Վալի (\*) Մամմադ Հասան Օղլի, որի  
„ խնդիրքը յարգելով Տէրութիւնը  
„ թոյլ տուած է մկրտիլ նրան 'ի  
„ Հայոց դաւանութիւն, սորա ապրուս-  
„ տի, հագուստի, և մկրտութեան  
„ լուծումն սահանալոյ համարհեռազրի,  
ընդամեննէ. 46 ռ.

- „ 15 Հոդ. Յընթացս 1875 ամի դրագրութիւն  
„ արի այլ և այլ մարդկանց հետ  
„ Ընկերութեան անդամներ գանելոյ  
„ համար: 430 ռուբլին. փոշտով և  
„ փոխանագրով դրկեցի Ընկերութեանը.  
„ Մայիսի շրջաբերականները և Նոյեմ-  
„ բերին հրաւիրական տօմսակները  
„ զրկեցի փոշտով, ուր հարկներ՝ այս  
„ առարկայից համար տարուայ միջոցին  
„ ծախսէ եղած, ընդ ամենը 15-75.  
„ Իրացի այս, Ընկերութիւնից ողորկածէ 50 հատ Ըն-  
„ թերցարան Խորէն Քահանայի Միջարեկեանց և 150  
„ հատ այլբենարան Աւագ Գրիգորեանցի, որը բաժա-  
„ նուածէ յետագայ ծխական գալուցներին 'իգիւղօրայս:

(\*) Ծանօթ: Այս Վալին ընդունվածէ Մարդ. Ընկ. որդեպիր եւ  
զարամանալի չերմեռանդութեամբ ուսանումէ:

„՚ի բանանց:	Ա.յթենարան.	.	50	օրինակ
	Ընթերցարան.	.	25	,
„՚ի գետաշէն,	Ա.յթենարան.	.	15	"
	Ընթերցարան.	.	20	"
„՚ի գետաբէկ:	Ա.յթենարան,	.	25	,
	Ընթերցարան.	.	5	"
„՚ի Դարաբուլաղ:	Ա.յթենարան	.	20	"
„՚ի Դուլացու շամշադինայ,	Ա.յթենարան	30		"
„Ինքս բաժանեցի որ ծանօթանան վարժապետները				
„այբբենարանի յարմարութեանը	.	10		"
			200	օրինակ.
			280	ռուբլ.
				Բոլոր ծախսն է 710 ռ.

„ Ուրեմն ՚ի 1-ն Յունվարի 1876 ամի, ինձ մօտ  
ոչմաց Ընկերութեան գումարիցը ոչինչ:  
„ Հաշիւը Ներկայացնելից առաջ և մի համառօտ  
„ատենարանութենից յետոյ մի քանի առաջարկու-  
„թիւններ արի ժողովեալ անդամներին, որք խոր-  
„հրդակցելէն և քուէարկելէն յետոյ՝ որոշեցին:  
„ Կար: Խոնարհաբար խնդրել ընդհանուր ժողո-  
ովից Ընկերութեան, որ գումարուելուէ ամսոյն 25.ին  
„՚ի Բագու, յատուկ Գանձակայ և մերձաւոր, Հայոց  
ոգիւղերից դպրոցներին և աղքատ ուսանողացը մար-  
ոդասիրաբար նպաստելոյ համար՝ թոյլ դալ գոր-  
„ծաղրել Գանձակեցի և մերձաւոր գիւղացի տարե-  
„կան Անդամոց վճարքը սկսեալ սոյն 1876 թուա-  
„կանից մինչև երեք տարին, որպէս զի միացնուի  
„սպասելիք գումարի հետ և այն տուքքը, որ գոյա-

հնալուէ այսուհետև նորոգ տարեկան անդամ զրվող  
ոպարոններից և մասնաւոր նուիրատութիւններից  
ոյանուն Ընկերութեան:  
„ Եւրբոր: Պարտաւորացրին ինձ, որ զրաւոր ծա-  
„նուցմամբ յայտնեմ ուրիշ քաղաքներում և տե-  
„ղերում դանուղ միւս տարեկան անդամներին, զի  
„նոքա եթէ կամենումնեն պահպանել անդամակցու-  
„թեան կոչումը իրենց վճարքը ուղղակի հասցնեն  
„այսուհետև Ընկերութեան գանձարանին ՚ի Բագու  
„տարուայ սկզբումը և ոչ ուշ քան Յունվար կամ  
„Փետրվար ամիսներումն:

„ Երբոր: Եթէ առաջիկայ երեք տարումը ցան-  
„կացողք լինին Անվոլիս Անդամութեան կոչման՝ նոցա  
„տուրքը պէտքէ լիովին հասցնի Ընկերութեանը և  
„միացնուի մայր գումարի հետ, համաձայն 49-յօդ  
„Ընկերութեան կանոնադրութեան:

„ Զուրբոր: Տարեկան անդամներից և մասնաւոր  
„ընձայարերութենից սպասելիս գումարը լրնթաց  
„երեք տարուայ, պատշաճաւոր հաշուէպահութեամբ  
„և գովանի խնայողութեանը ծախս անելու միաձայն  
„քուէարկութեամբ ընտրեցին: Պա. Յակոբ Վիսիկեան-  
„ոցին, Մովսէս Եպիսկոպոսեանցին, Աղայ Աղայեանցին,  
„բարեշնորհ Տէր Գրիգոր Բաբաքեսեանցին և զիս:  
„Այս 5 անձինք կազմելով տնօրէնս-մասնաժողով  
„Ընկերութեանդ ՚ի Գանձակ՝ պարտական են հաշիւ-  
„տալ մոլից և ելից ընկերապատկան գումարի ՚ի  
„Գանձակ, ամեն տարուայ վերջումը:

„ և Հինգերբոր: Բոլոր ժողովեալ անդամները  
„խոստացան ամենայն աշխատութիւն և գրիստոնէ-  
„ռական յորդորանք ՚ի գործ դնել, որ այսուհետև

„Գանձակումը և յայլ տեղիս բազմանան Ընկերութեան Անդամները՝ ՚ի փառ և պատիւ Հայոց Ազգի բազմերախտ Հօրն մերոյ Սրբոյն Գրիգոր Լուսաւորչի, և խնդրեցին ընդհանուր ժողովից, որ Ընկերութեան հաշելը տպագրելիս հրաւիրուի Ազգի հոգեոր անդամների ուշադրութիւնը և մասնակցութիւնը այս ազնիւ և օգտակար գործի մէջ:

Պ. Տէր Ներսէսեանցը այս գրութեանը հետ ՚ի միասին ուղարկելէ մի ճառախօսութիւն, որից երեսում թէ այս պարոնի հոդին և միտքը ինչո՞վէ պարագում ախւ և դիշեր ՚ի սէր մարդկութեան և Ազգի: Ահա բովանդակութիւնը ճառի, որ կարգացելէ ինքը առաջի մասնաւոր ժողովի գանձակաբնակ Անդամոց Ընկերութեան:

„Գերապատիւ Հարք և Մեծարոյ Պարոններ!

Պ. Այսօր հրաւիրելով իմ օթեանը գանձակումը պահովութ անփոփոխ և տարեկան անդամներիդ բառուայ Մարդասիրական Ընկերութեան անցեալ տառուայ Հաշուի մի մասը գանձակայ վերաբերութեամբ վերազննէք և Զեր միտքը առաջիկայ 1876 թուականի համար յայտնէք ընդհանուր ժողովին ՚ի Բագու և յառաջ բան այդ հաշեւի Զեղ ներս կայացնելը թոյլտուութիւն եմ խնդրում, որ երկու խօսք խօսեմ այս Ընկերութեան մասին:

Զեղանից գուցէ շատերին յայտնի լինի, որ ես վաղուց մտադիր էի Տէրութեան հրամանաւ մի բարեգործական ընկերութիւն սահմանել գանձակումը վասըն օգներց տնանկաց քաղաքիս՝ շնութեամբ ցորենի շտեմարանի, չքաւոր ուսանողաց և դիւղական

Դպրոցաց զանազան ուսանողական նպաստիւք և ողբամական օժանդակութեամբ, բայց մի քանի տը խուր հանգամանքներ արգելառիթ եղան ինձ, որոց մտարերելը ոչ միայն ցաւալի է՝ այլ և այսուհետեւ աւելորդ է յիշելք:

Այս արգելքները չկարողացան արմատախիլ առանել իմ սրտէն այն ձկուումները գէպ ՚ի Ընկերականութիւն, որոնք մուելէին իմ մէջ մի քանի տարից ստեսը: Վասնորոյ անյաջողութեան հանդիպելով մի անկերութիւն կազմել գանձակումը, ես 1873 թուականումը Անիսովիս Անդամ գրուեցայ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հաստատեալ բագուայ Մարդասիրական Ընկերութեանը՝ յանուն Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին Հայաստանի, համազուած գոլով՝ որ Հայոց անկերութիւնը որ քաղաքում և լինի՝ օգտաւէտ է ունդհանուր ազգի համար և նորա յառաջադիմութեանը:

Անդամ գրվելից յետոյ վերազննելով յիշեալ անկերութեան հաշեւները սկսեալ 1862 թուից մինչև 1874 թիւը՝ ես Հասայ այն եղրակացութեանը, որ մեր անդրանիկ Ընկերութեան գործերը համեմատելով Ռուսիանակ Հայերի բազմութեանը՝ շատ զանդաղեն գնում, վասն զի նորա զոյութիւնը շատ Հայաբնակ քաղաքներում համարեա բոլորովին անյայա են, բայց աւելի տխուրը այն է՝ որ մեր ազգի յառաջաւոր անձններ, մանաւանդ հոգեւորականք, արժանաւորապէս չեն համակում նրան Անդամ գրուելով և զանազան նուիրատութեամբ օգնելով: Մի այսպիսի սառնասիրտ յարաբերութեանց հետեւանքը այնէ եղել որ 10-12

„տարուայ միջոցին Ընկերութեան դրամագլուխը չէ  
աւելացել 10-15 հազար ռուբլից, որով յայտնի  
որսնէ, Ընկերութիւնը չէր կարող մի երեկի գործ  
ոյառաջացնել կամ մի զգալի օգնութիւն հասցնել  
ոչայ չքաւոր ուսանողներին Ոտոսաստանի մէջ:

„ Յանկանալով փոքր ՚ի շատէ օգնել այդ Ընկե-  
ութեանը ես 1874 և 1875 թուականներումը  
ո, հրաւեցի, այժմ այս տեղ գտնուած պարոններիդ  
Անդամ զրուել լիշեալ Ընկերութեանը: Իմ խո-  
նարհ շնորհակալութիւնը և անկեղծ դոհունակու-  
թիւնը թոյլ տուէք յայտնել Ձեզ Մեծապատիւ  
ոթեարք! այն պատրաստականութեան մասին, որով  
ոդուք ընդունեցիք իմ առաջարկութիւնը: Նոյն  
առաջարկութիւնը արել եմ կովկասեան զանազան  
ոքաղաքներում և գիւղերում բնակող Հայերին  
ոթէ բերան առ բերան իմ ճանապարհորդութեանց մի-  
ոջոցին և թէ զրաւոր յարաբերութեամբ, որոյ հե-  
տեւանքը եղելէ այլ և այլ աեղերում մի քանի  
տարեկան և Անփոփոխ Անդամ գտնելը:

„ Այսպիսով իմ աշխատութեամբ գտած և Ըն-  
կերութեան կողմից ընդունուածեն 14 Անփոփոխ և  
60 տարեկան Անդամներ, որոց մեծ մասը օտար  
ոքաղաքացի և գիւղացի Հայք են:

„ Որքան իմ կարողութիւնս և ընդանեկան հան-  
ոգամանքներս կներեն՝ ես այսուհետեւ էլ պատ-  
որաստեմ բարոյապէս օգնել ոչ միայն բագուայ՝  
այլ և ամենայն բարեգործական Ընկերութեանց  
որոց նալատակնէ և կլնի Հայաղի մանուկներին  
ոկրթել դաստիարակելը, տնանդներին օգնելը չքա-  
ւոր ուսանողներին և զարոցներին պահապանելը,

ողբենեօք և դրամական օժանդակութեամբ, նաև  
ոչայ հեղինակների ազդիւնաւոր և ազգօգուտ աշ-  
ուխատասիրութեանց տպագրելը և ժողովուրդի մէջ  
ոհրատարակելը ևայն: Բայց մի միայն իմ համա-  
կրութիւնը չէ բաւական այս ծանրակշիռ գործե-  
որումը, վասն զի տարաբաղդաբար ես չունէմ այն  
հարստութիւնը, որով առանց իմ բազմահոգի ըն-  
ոդանեաց ապրուստին վնաս հասցնելու՝ կարողանայի  
ոձեռնատու լինել ազգաշահ գործերի. ուրեմն այս  
ոգործերին համակրել հարկաւոր է ընդհանուրի  
ոկողմից և առաւելապէս հասարակութեան զարգաց-  
ուալ և հարուստ անդամների կողմից: Այս հարցի  
մասին մեր Հայ մամուլը վերջին երեքչորս տարումը  
ոշատ պատուական և ազգօգուտ յօդուածներ է  
ոհրատարակել, վասնորոյ բաւականէ, եթէ ամէն  
մէկս այդ յօդուածները ուշադրութեամբ կարդանք  
և ապա չհրաժարուենք իրագործել բանիւ և  
ոգործով: Առ հասարակ ամէն մէկ բարեմիտ Հայ,  
եթէ համակրումէ Ընկերութեանը Բազուայ՝ և նորա  
ոերկարատեւ և օգտաւէտ գործունէութիւնը իւր  
սրտին մօս է՝ պէտք է ոչ թէ միայն բաւականա-  
նայ իւր Անդամ զրուելովը և մի քանի ոուրի  
նուիրելովը՝ այլ և հրաւիրի ուրիշներին յանդա-  
մակցութիւն և այդպիսով բարձրացնի Ընկերու-  
թեան հարկը զօրացնի նորա նիւթական ուժերը  
ու միանդամայն աշխատի տարածել հասարակու-  
թեան մէջ նորա բարի նպատակները:

„ Այս գէպքումը մեր պարտաւրութիւնները իմա-  
նալոյ և ճշտիւ կատարելոյ համար բաւականէ՝ եթէ  
մասաբերենք թէ Փարիզումը կան 2209, Լոնդոնում

„3300 և Ամերիկայումը անթիւ բարեգործական  
„Ընկերութիւններ, թող թէ Եւրոպայի միւս քաշ  
„ղաքները, ուր ամէն ժամ և կարելի է ասել ամեն  
որովէ, կարծես յղանումէ, ծնանումէ և զարաւոր  
„կեանքով ապրումէ հազար ու մէկ տեսակ բարեշ  
„նպատակ Ընկերութիւն, սկսեալ մշակներից մինչեւ  
„ամենահարուստը: Ուրեմն միթէ ամօթ չի լինիլ  
„միլիօնաշափ Ռուսիաբնակ Հայերիս, չպահապանել  
„մեր անդրանիկ Ընկերութիւնը որը կրումէ իւր  
„ճակատի վերայ մեր երախտաւոր Լուսաւորիչ Հօր  
„հրաշալի անունը: Անհերքելի և յայտնի Ճշմարտու  
„թիւնէ, որ եթէ մեր հոգեորական դասը իբրև  
„ազդող ժողովրդեան վերայ, հետեւը իւր սուրբ պարա  
„տաւորութեան յարմար այս ամենակարևոր գործին  
„գոնէ ՚ի պատիւ բազմաչարչար Հօրն մերոյ Սրբոյն  
„Գրիգորի Լուսաւորչին Հայաստանի, Ընկերութեան  
„երկոտասանամեայ գոյութեան միջոցին՝ ջերմ հա  
„մակրութիւն ցոյց տար դէպ ՚ի նա և եթէ իւր  
„քարոզութեանց և ատենաբանութեանց մէջ յեկե  
„ղեցիս, ՚ի հացկերոյթս և յայլ պատշաճաւոր տես  
„ղիս, տարին, առ սակաւ, երկու երեք անդամ խօսեր  
„այս Ընկերութեան վերայ, մանաւանդ Լուսաւորչ  
„տօներին, իմ կարծիքով այժմ նորա Անդամների  
„թիւը կ'լինէին աւելի քան թէ մի քանի հազար  
„անձինք, քայլ ցաւելի է յիշել, որ Ընկերութեան  
„Անդամները, համեմատելով ազդի Անդամների հետ,  
„դեռ ևս շատ սակաւ են, մինչեւ անդամ, ցայսօր  
„դեռ չկայ մեր ազգումը մի ցանկացող, որ ուրա  
„վսութեամբ ընդունի Պատուաւոր Անդամի կոչումը  
„և միանդամայն նուիրի մէկ հազար ոռուբլի որւ

„կարծեմ զգալի չպէտքէ լինի հարուստներին:

Այժմ Խորհրդական Անդամք հարկաւոր են  
համարում Ընկերութեան դրամոց հաշիւը տալ Զեղ  
սկսեալ 1873 թուականից մինչև 1876 թուականն:

### Մ Ա Ւ Տ Ք:

Առ մինն Յունվարի 1873 ամի Ընկ  
կերութիւն ուներ զուտ դրամ . 5784 ռ. 42 կ.  
և խաղարակական բիլեթներ 45 հատ,  
հաշուելով իւրաքանչիւրն 194 ր. 50 կ. 4702 ռ. 50 կ.

### Յընթացս 1873 ամի ստացան:

Ա. Ընձայաբերութիւն նոր գտնուած 13 Անփոփոխ Անդամներից . . .	1400 ռ.
Բ. Ընձայաբերութիւն նոր գտնուած 17 տարեկան Անդամներից . . .	96 ռ.
Գ. Տպարանական արդիւնք . . .	496 ռ. 64 կ.
Դ. Վիճակահանութիւնից, աշակեր- տուհեաց ձեռագործների . . .	204 ռ. 25 կ.
Ե. Առանձին ընձայաբերութիւն, և Ընկերութեան շնութիւնից . . .	119 ռ.
Զ. Տօկոսիք զուտ գումարից և խա- ղարկական բիլեթներից . . .	1075 ռ.

Անդամներ 13,877 ռ. 81 կ.

### Յընթացս 1874 ամի ստացան:

Ա. Ընձայաբերութիւն նոր գտնուած 16 Անփոփոխ Անդամներից . . .	1600 ռ.
Բ. Ընձայաբերութիւն նոր գտնուած 55 տարեկան Անդամներից . . .	275 ռ.

Դ.	Թատրոնից արդիւնք, ներկայացրած բարեգործական նպատակաւ . . .	140 ռ. 88 կ.
Ե.	Առանձին ընծայաբերութիւնք բա- րերար անձինքներից . . .	153 ռ.
Յ.	Թօշակատու աշակերտուհիներից . . .	45 ռ.
Զ.	Տպարանից արդիւնք . . .	550 ռ.
Է.	Ընկերապատկան շինութիւնից արդիւնք 84 ռ.	
Ը.	Տօկոսիք զուտ գումարից և խաղար- կական բիլեթներից . . .	1391 ռ. 68 կ.
		<hr/> Ընդ ամենը. 4239 ռ. 91 կ.

Յընթացս 1875 ամի ստացան:

Ա.	Ընծայաբերութիւն նոր գոմնուած 19 Անփոփոխ լնդամներից . . .	1900 ռ.
Բ.	" Բագու և գանձակ գըտ- նուած 100 ջարեկան լնդամներից . . .	515 ռ.
Գ.	Վիճակահանութիւնից. Աշակերտու- հեաց ձեռագործներից: . . .	137 ռ.
Դ.	Տպարանից արդիւնք . . .	520 ռ.
Ե.	Ընկերապատկան շինութիւնից ար- դիւնք . . .	40 ռ.
Զ.	Տօկոսիք զուտ գումարից և խաղար- կական բիլեթներից . . .	1531 ռ. 90 կ.
		<hr/> Ընդ ամենը. 4643 ռ. 90 կ.

Ամենից գումարնէ 22,761 ռ. 62 կ.

### Ե Լ Փ:

Յընթացս 1873 ամի ծախս է եղել

Ա.	Օրիորդաց ուսումնարանի վերայ ծախք ընդ ամենը . . .	989 ռ. 21 կ.
Բ.	Տպարանական տառերի և մանր ծախք 500 ռ.: 80 կ.	
Գ.	Խորհրդարանի գործավարական ծախք 72 ռ. 65 կ.	

Դ.	Որդեգիրներին նպաստ . . .	505 ռ.
Ե.	Բագուայ գեմնավայումն աղքատ ու- սանողաց նպաստ . . .	103 ռ. 96 կ.
Զ.	Պարգևաբաշխութիւն աշակերտաց, դասական գրեանքով . . .	22 ռ. 5 կ.
Է.	Մանր ծախք և շինութեան կարկա- տանաց վերայ . . .	18 ռ. 71 կ.
		<hr/> Ընդ ամենը 2212 ռ. 98 կ.

Յընթացս 1874 ամի ծախս է եղել:

Ա.	Օրիորդաց ուսումնարանի վերայ ծախք ընդ ամենը . . .	736 ռ. 45 կ.
Բ.	Որդեգրաց: Բագու և յայլ տեղիս . . .	434 ռ. 83 կ.
Գ.	Աղքատաց ողորմութիւն . . .	254 ռ. 95 կ.
Դ.	Մանր ծախք խորհրդարանի համար և բիլեթների համար . . .	156 ռ. 25 կ.
Ե.	Գանձակումն պ. Տէր Ներսէւեանցի առաջարկութեամբ զանազան ընծայա- բերութիւններ է եղել խորհուրդի թշոյ- տուութեամբ. . .	347 ռ.

Ընդ ամենը 1929 ռ. 48 կ.

Յընթացս 1875 ամի ծախս է եղել:

Ա.	Օրիորդաց ուսումնարանի վերայ ծախք ընդ ամենը: . . .	750 ռ. 50 կ.
Բ.	Որդեգրաց: Բագու և յայլ տեղիս . . .	445 ռ.
Գ.	Խորհրդարանի գործավարական ծախք 148 ռ. 57 կ.	
Դ.	Մանր ծախք զանազան դիպուածներում 85 ռ.	
Ե.	Աղքատաց ողորմութիւն . . .	120 ռ.
Զ.	Տպարանի համար գնուածէ տառեր	542 ռ. 20 կ.

Ե. Շինութեան կարկատանի . . . .	58 ռ. 1 կ.
Ը. Գանձակումն ծախսէ եղել զանազան ազգաօղուտ գործերի վերայ . . . .	280 ռ.
Թ. Քիվար գիւղի նորաբաց ուսումնարանի վարժապետի 4 ամսի վարձ . . . .	50 ռ.
Ժ. Կջմիածին ողարկվեցաւ, Ճեմարանի կիսոյ արման համար . . . .	100 ռ.
<hr/> <b>Ընդ ամենը. 2579 ռ. 284.</b>	
Ամենից գումարնէ 6721ռ. 74կ.	

Այս գումարը հանելով մուտքից, մնաց առ մինն Յունվարի 1876 ամի:

Ա. Զուտ գումար . . . .	11337 ռ. 38 կ.
Բ. Խաղար. բիլիթներ 4702 ռ. 50 կ.	16039 ռ. 88 կ.

**Վ**երոյիշեալ հաշուից եղբափակվեց, որ Ընկերութիւնը առ այժմ ունի առ ձեռն գուտ գումար 11,337 ռ. 38 կ. և խաղարակական տոմսակներ 4702 ռ. 50 կ. ընդ ամենը . . . 16039 ռ. 88 կոս:

Բոլոր այս գումարները և թղթադրամները գտանելումն զանձապետ պ. Գրիգոր Թումայեանցի մօտ, որին՝ յանձնածէ շահացնելու ՚ի 17 Փետրվարի 1873 ամի սահմանադրած օրագրութեամբ, ստանալով նորանից առանձին ապահովագրի: պ. Թումայեանցը այն օրից սկսեալ, որպէս ցոյց են տալիս նորա իւրաքանչեւր տարվայ հաշեները, խղճի մաօք աշխատումէ Ընկերութեան գումարը և թողուլ առանց շահաբերութեան, մի այդպիսի հաւատարիմ և բարենախանձ Անդամ, Մարդասիրական Ընկերութեան Անդամոց սրտերում պէտքէ գտնի միշտ սիրոյ և յարգանաց տեղի:

Առաջի առնելով մեծարու Անդամոցդ հայացու դութիւնը Ընկերութեան Անդամոց և դումարաց հաշիւը Խորհրդական Անդամք կամենումն դարձուացնել Ձեր ուշադրութիւնը Օրիորդաց ոչ Հոկտեմբեան ու ուսումնարանի ներկայ դրութեան վերայ:

Անցեալ տարվայ տարեգարձի օրը, Զեղ քաջ յայտնի է թէ՝ ընդհանուր ժողովը յիշեալ ուսումնարանին վերադերեալ հարցը վճռեց, որ նա մնայ, ինչպէս առաջէր, միւնոյն զբութեան մէջ, այսինքն չփակել երբեք նորան, այլ հետեւել այնպիսի ուղղութիւն տալ որ ուսանող օրիորդները կարողանան յառաջադրէմ գտնվիլ ուսանոն մէջ: Որովհետեւ Ուսուաց լեզուի վարժուհին անտեղեակ լինելով մեր լեզուին, որքան աշխատումէր չեր կարողանում բացել աղջկերանց միտքը և այս վերջները չհասկանալով նրա դաս տուծ առարկաները, սովորումէն ինչպէս թութակ, վասնորց Անդամք ՚ի տեղի վերոյիշեալ վարժույն նշանակեցին Հայուի Տիկին Եղիսաբեթ Դրիգորեանցին:

Ուսումնարանը բաղկանումէ երկու դասատներից սկսարաստական և առաջին: Այս երկու դասատնեց մէջ աւանդումէն Կրօն, Հայոց պատմութիւն, Թումայեանութիւն, Հայկական և Ուսուական լեզուներ: Հայկական և Ուսուական գեղագրութիւն, Նրգ և ձեռաւդրծութիւն: Բոլոր ուսանող Օրիորդք են 35, իսկ ուսուցիչք 3, որոնցից Ա. Խորէն Քահանայ Միրզաբէկեանցն ուսուցանումէ Հայոց լեզու առաջին դասատնեան, իսկ Կրօն և երգ երկու դասատնեց մէջ: Բ. Աւագ Գրիգորեանցն ուսուցանումէ Հայոց պատմութիւն, թուաբանութիւն, առաջին դասատնեան, իսկ

Ոուսաց լեզու երկու դասատանց մէջ: Գ. Տիկին  
Եղիսաբէթ Կրիգորեանցն ուսուցանումէ Հայոց լեզու  
և Թուաբանութիւն պատրաստական դասատան,  
նոյնպէս Հայկական և Ռուսական գեղագրութիւն և  
ձեռագործութիւն երկու դասատանց մէջ:

Խորհրդական Անդամք պարտաւոր են համարում,  
ծանուցանել Զեղ թէ Յուլիս ամսին տարւոյս նոքա  
ստացան Ղուբայ նահանդի Քիլվար գեղջ Հայոց  
հասարակութիւնից մի աղեքագիր, որից երեւումէ, որ  
այս հասարակութիւնը՝ ի վաղուց հետէ զրկված  
լինելով լուսաւորութիւնից, նոցա արք և կանայք,  
ծերք տղաք, և դստերք այսօր աչքաթող արած  
մասցած են մի անկիւնում, և միշտ բնակվելով նոցա  
շուրջը պատող մահմետական ազգաց մէջ, կորու-  
սել են ամենազլիսաւոր նշանը Հայութեան, որ է լեզուն,  
տունենալով և Քրիստոնէական հաւատոյ կողմանէ այն-  
քան գիտութիւն, որ կարողանան մի առ ժամանակ  
պահպանել և այս կոչումը՝ Ուստի Անդամք յա-  
ռաջադոյն ժողովելով հաստատ տեղեկութիւն այս  
մասին, և իմանալով որ մի քանի բարեմիտ անձանց  
սրտերում, յօրդորանօք թեմական վերատեսուչ Սր-  
բակրօն Սահակյ Վարդապետի, յղացել է սուրբ ցան-  
կութիւն ուսումնարան բացելոյ այն զիւղում, այն-  
պէս որ վարժապետը և տունը թէպէտ պատրաստէ,  
բայց ժողովրդականք չեն կարողանում գտնել մի  
հաստատ աղբեւր, որով կարելի լինի պահպանել  
այդ ուսումնարանը՝ առանձին օրագրութեամբ՝ ի 4-ն  
Նոյեմբերի 1875 ամի նշանակեցին Ընկերութեան  
գումարից մի վարժապետի վարձ ամսական 12 ռ. 50 կ.  
և սահմանեցին առաքել այս վարձը մինչ ցյունվար

ամիսը 1876 թ. այսինքը մինչ ցընդհանուր ժողով կազ  
մելը, խոստանալով խնդրամատոյց հասարակութեանը  
միջնորդել առաջի Զեր և խնդրել որ ժողովը իւր ցա-  
ւակցական ուշադրութիւնը դարձուցանէ վերսյիշեալ  
նորաբաց ուսումնարանի վերայ, նորա զրութիւնը  
ևս առաւել բարեգրելոյ համար, որ խղճալի ման-  
կունք չ'մանն իւրեանց ծնողաց պէս տղիտութեան  
մէջ, անընդհատ առաքելով զրամական և միւս  
ուսումնարանական հարկաւոր պիտոյքներ և զրքեր:  
Ուսումնարանը, որպէս երեւումէ խորհրդական Անդա-  
մոց ստացած թղթակցութիւնից, արդէն սկսելէ շա-  
րունակել իւր ընթացքը, կնքելով իւր ճակատին մեր  
Ընկերութեան անունը: Այդ ուսումնարանին վերա-  
բերեալ հանգամանքները արդէն յայտնիէ մեր Վեհա-  
Փառ ԿԱԹՈՒՂԼԻԿՈՍԻՒՆԻ, որոյ աղազաւ Անդամք ստացան  
նորին Օծութիւնից յետագայ օրհնութեան կոնդակը:

„ Գէորգ ծառայ Քրիստոսի և անհասանելի կամքը  
„Ասուուծոյ Եպիսկոպոսապետ և ԿԱԹՈՒՂԼԻԿՈՍ ամենայն  
ուժացոյ Ծայրագոյն պատրիարք համազգական նախա-  
րածար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր  
ոնկեղեցւոյ Սրբոյ կաթողիկէ Էջմիածնի: Բարեբաշտ  
Անդամոց խորհրդարանի Մարդասիրական Ընկերու-  
թեան Հայոց Բաղուայ, ողջոյն և Հայրապետական  
ոօրհնութիւն:“

„ Ախորժելի է մեզ լսել զգեղեցիկ համբաւ բա-  
րեգործութեան պատուական խորհրդականաց և  
Անդամոց Մարդասիրական Ընկերութեանդ, որ այդ-  
շափ ուղղութեամբ և արդիւնաւոր յառաջիսաղա-  
ցութեամբ ընթանայ ընդ առաջադրեալն նպատակ  
աձեռնտութեան նիւթական և բարոյական զարգաց-

„ման իւրոցն համազգեաց, որում նոր իմն ապացոյց  
„մատուցանէ ՚ի լիակատար գոհութիւն սրտի մերոյ  
„յատկացուցեալ գոլով՝ ըստ վկայելոյ Սահակ Վար-  
„թապետի նախանդամոյ Շեմական Ատենի Շամա-  
„խոյ ամի ամի ռուբլիս արծաթոյ հարիւր և յի-  
„սուն ՚ի պետս բարեկարգ կառավարութեան նորա-  
„րաց դպրոցի Քիլվար գեղջ, ընդ բարեխնամ խնա-  
„մակալութեամբ իւրով տուեալ տեղի և այնր գեղջ  
„ուսումնակարօտ մանկուոյն գովելի առատաձեռնու-  
„թեամբ; Մարդասիրական Ընկերութիւնդ արդէն  
„սքանչոս արժանի եղեալ է մերոյս ։ Հնորհակալեաց  
„վասն գոյն օրինակ ազգասիրական գործառնու-  
„թեամսց իւրոցն գործունեայ և բարեպաշտ Անդամոց,  
„և քանդի և ներկայիս առատաձեռնութիւն ոչ սա-  
„կաւ և դուզնաքեայ ինչէ առ անտարբերութեամբ  
„ազգայնոց այլոց բազմահարուստ քաղաքաց ՚ի  
„գործ ազգայնն յառաջադիմութեան, վասնորոյ իրա-  
„ւունս Զեղ համարեմք վայելելոյ զշայրապետական  
„առատարձիր Օրհնութիւն մեր, զոր և Հնորհեմք  
„ամենեցունցդ ՚ի բոլոր սրտէ արտայայտելով զյոյս  
„մեր՝ եթէ հետղիւտէ նորանոր դպրոցք բացցին  
„Հնորհիւ սիրալիր և ազգասէր խնամոց Զերոց, եղ-  
„եալքն ՚ի բարեկարգ պայման վերածեսցին, նա մա-  
„նաւանդ չփակիցին բնաւ դրունք միոյ դպրոցի ՚ի  
„պատճառս բայցման կամ հաստատութեան միւսոյն,  
„թրպէս գեղ զանպակաս վարձս ընկալչեք ՚ի վարձա-  
„հասոյց բարերարէն ըստ չափաւ արդեամսց Զերոց  
„և վաստակաց: Յանձնեմք զԶեղ զամեննեսին յամե-  
„նապահ խնամն և Հնորհս վերին տեսչութեան:  
Գլորդ. Դ. ԿԱԹՈՒԴԻԿՈՍ ամենայն Հայոց: թ. 310,

՚ի 15 Հոկտեմբերի 1875 ամի Գրկչական, և աղ-  
„զիս մերոյ ոյլիդ. ՚ի Ս. Եջմիածին:

Բացի սմանէ Խորհրդական Անդամք կարդալով  
Հայոց և Ռուսաց լրազիրներում թէ Թիֆլիզու կա-  
սիկական գիմնազիօնում ուսանող Սարգիս Ծատուր-  
եացն, գանուելով յետին չքաւորութեան մէջ չեկա-  
րութանում իւր ուսումը շարունակել, այս մասին  
թղթակցեցին „Մեղու Հայաստանի“ խմբագրատան  
և խնդրեցին որ հաստատ տեղեկութիւն հասցնի  
Ընկերութեանը պ. Ծատուրեանցի կողմանէ: Ուստի  
երկու լրազիրները „Տիֆլիսկի Եւստիկ“ 101 հա-  
մարում և Մեղու Հայաստանի 38 համարում հրա-  
տարակեցին կովկասեան Ռւսումնական շրջանի տեսուչ  
պ. Ժելիխովսկիի, Ծատուրեանցի մասին տուած  
տեղեկութիւնը որից անդամք նշամարելով թէ՝ այդ  
երիտասարդը, յառաջադիմութեամբ, զիտութեամբ  
և վարուք, յիշեալ գիմնազիօնի ամենաընտիր աշա-  
կերաներից մէն է և ունի մեծ կարօտութիւն օգնու-  
թեան, և թէ Մարդասիրական Ընկերութեան ներքոյ, նորան հա-  
մար նշանակել միայն տասն ուուբլի ամսական նպաստ  
վասնորոյ Անդամք օրագրութեամբ ՚ի 15-ն Հոկ-  
տեմբերի 1875 ամի սահմանեցին, սկսեալ ՚ի 1 էն  
Նոյեմբերի նշանակել վերոյիշեալ աշակերտի հա-  
մար ամսական տասն ուուբլի, մինչ ցընդհանուր ժո-  
ղով կազմելլ:

Այս երկու, այսինքն մեկը Քիլվար գեղջ ուսում-  
նարանի և միւսը Ծատուրեանցի համար նշանակած  
դրամական նպաստները ժողովը արդէն նկատեց հա-

շուեցուցակի մէջ զրած մուս ծախսերի շարքում և  
Խորհրդական Անդամք յոյս ունին, որ ժողովը չի  
թողնել այդ յօդուածները առանց ուշադրութեան:  
Վերջաւորելով 1875 թուակ. հաշիւը, Խորհրդական  
անդամք ՚ի նկատի ունենալով, որ այսօր ժողովը  
պիտի ընտրէ նոր Նախագահ և Խորհրդական Ան-  
դամք վասն հանդերձեալ 1876, 77 և 78 ամաց,  
պարտաւորէ համարում Զեր ուշադրութիւնը դար-  
ձուցանել Ընկերութեանս անցեալ երեք տարուայ  
1871, 72 և 73 ամաց հաշուեաարութեան մէջ,  
14-ից մինչև ՚ի 21 երեսներում տպագրուած, բա-  
ցայայտութիւնների վերայ, որոնք վերաբերվումեն նոր-  
ընտիր Նախագահի և Անդամոց ընտրողութեան և նոցա  
պարտաւորութեանց, ուր նկարագրվածէ, թէ որսիսի  
անձննք սէտքէ ընտրվին և նոքա ինչո՞վ պիտի  
պարապեն երեք տարուայ ընթացքում: Խորհրդա-  
կան Անդամք խնդրումեն, որ ժողովը այս անդամ մի  
սուր Հայեցողութիւն դարձուցանէ ընտրելի անձանց  
ծանր պաշտօնի և նոցա արժանաւորութեան վերայ:  
Որովհետեւ մեր Ընկերութեան անունը օր ըստ օրէ  
տարածվումէ զանազան քաղաքներում, ուստի նոր  
ընտրված Անդամք պարտաւոր են, նաւալվարի պէս  
գործունէութեան դեկը ձեռներից բաց չի թողնել  
և հետևել ինչ ձեռվ սկսելէ Ընկերութիւնը իւր  
գործը, այնպէս շարունակել և դէպի այնպիսի ուղ-  
ղութիւն ածել նորան, որ իւրաքանչիւր Հայ, տեսա-  
նելով նորա քաղցր և ազգօգուտ պառողները իւր  
սրտի յօժարութեամբը ցանկանայ մասնել անդամոց  
շաբքը: Զեղ քաջ յայսնի է, որ մեր ազգի հա-  
րուսաներից շատերը դեռ անտարբերութեան քնից

չեն կամենում զարթնել և օրօրվումեն ունայնա-  
սիրութեան օրօրոցում: Եթէ սոքա ճանաչէին  
իւրեանց պատիւը և այն նշանակութիւնը  
որ բաղդի բերմանքով սոսացել են այս աշխարհում,  
նոքա չին թողնել, որ Ընկերութիւնը իւր  
քայլերը փոխէր այդպէս դանդաղ: Դուք զիտէք,  
որ առանց մամնայի ոչ մի ձեռնարկութիւն կամ  
նպատակ չի կարող հանիլ իւր կատարելութեան  
առաւել ևս բարեգործական գէպերում: Ուրեմն  
մինչև մեր բաղդախնդիր Հարուստների քնից զարթ-  
նելը, Ընկերութեան յոյսը պէտքէ կախուած մնայ  
Խորհրդական Անդամոց գործունէութենից, նորա  
չափաւոր գումարից և մարդասէր ու ազգասէր ան-  
ձանց ընծայագերութենից:

## Ալրելի Բարեկամք և Եղբարք իմ.

Չեզ յայնիէ որ իւրաքանչիւր մարդ իրք որ  
պատրաստվումէ հրաժարվել աշխարհից և մնաս  
բարեաւ անել իւր մտերիմ բարեկամաց և աղջա-  
կանայ հետ աւանդումէ նրանց իւր վերջին խօսքը  
կամ լեզուաւ և կամ զրավ։ Ես վեց տարի շարու-  
նակ լաւ կամ վատ ծառայեցի Ընկերութեան, սա-  
կայն այսօր միտք ունիմ մնաս բարեաւ անել Չեզ  
հետ որովհետեւ իմ կենսական հանգահանքները չեն  
թողնում շարունակել ևս Ատենադպրութեան պաշ-  
տօնը. բայց մինչ յայն թոյլ տուէք ինձ իմ վերջին  
խօսքը ուղղել գեպ ՚ի Չեզ և ապա թէ հրա-  
ժարվել։

Անցեալ տարի ես Չեզ պատեցի մի երազ բայց  
նա ոչ թէ երազ էր, այլ կենդանի տեսիլք. մի  
քանի ամսից յետոյ երբ այս իմ տեսիլքը տպագր-  
վեց Ընկերութեան հաշուի մէջ, մի անուսում քա-  
հանայ և մի աշխարհական հարուստ հայ, մի հան-  
գիսում իմ լուակացութիւնը ընդհատեցին այս խօս-  
քերով։ Նախ և առաջ սկսեց Քահանայն։

Ա Ալրելի, լաւ կանես միշտ քնած մնաս և երբէք  
ուերադ չտեսնես, որովհետեւ Հայոց Եկեղեցւոյ ճա-  
սակատին զբած չկայ, որ Քահանայքը քարոզեն, թո-  
ղում ասել որ և ժողովուրդը ևս չի պահանջում  
մեղանից տանել այս լուծը։ Աստուած երկար կեանք  
պարզեց մեր ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ, որ այս նոր  
նոտային ծայնազրութենով ազատել է մեզ ժա-  
մերգաւթենից, մեղ համար մնումէ միայն լաւ  
ողիստաւորվիլ, պատարագ անել, կենդանեաց և

ամեռելոց համար, հանդէսով մեռել թաղել, նոր  
ամեւսնացելոց պսակել և նորածիններին կնքել,  
առտեղ խմել հանդիսա պառկել։ Մեր քարոզը մեր  
Եկեղեցւոյ արարողութիւնն է և պայծառ զարդը  
պատափերներով և ջահերով, ի՞նչ մեր բանն է հա-  
րուստների պատուին զիազել և նոցա կմանայ  
ոշուայլ ոսկեզօծ հանդերձների անունը տալ, որ Օրհ-  
նե՛ա տէրից և պատուից զրկվինք. աւետարանումն  
ոէլ չկայ զրած, որ հայի Քահանայն կամ Վարդա-  
պետը բայցի իւրեանց պաշտօնից և քարոզութիւ-  
նով պարապեն, ամենայն մարդ նախ և առաջ  
ոպարտաւոր է իւր օգուտը ձեռքից բաց չթողնել,  
որովհետեւ եթէ մեք Քահանայքս սկսենք քարոզել  
և լուսաւորել ժողովուրդը, յայնժամ նոքա կիմա-  
ուրովին մի սիրտ և մի հոգի կ'զառնան և մեղ-  
իսպառ կմուսնան. Ծյուը խաւարովն է ճանանչվում,  
նմանապէս եթէ ժողովուրդը խաւար չ'լինի Քահա-  
նայն նորա ազքին լուսաւոր չի երկալ։ Նրանելի  
որեր, որ անցին, երբ միամիտ ժողովուրդը Քահա-  
նային Աստուծոյ տեղ էր պաշտում, և նրանից  
ոչինչ չէր պահանջում։ Եթէ քարոզութիւնը մի  
ամենահայրկաւոր բան լինէր, մեր Վարդապետները  
վանքերի խցերում իւրեանց անձները պարարելով  
չ'չին մնալ, այլ անդադար քաղաքներում և զիւ-  
ողերում, ինչպէս Քրիստոսը քարոզութենով կ'ու-  
րապէիս Ուրեմն Հայոց Եկեղեցւոյ հարցը արդէն  
ովհնաված է և քեզ բան չէ մնում խօսալու։

Քահանայն երբ վերջացրեց իւր խօսքը, հարուստ  
աշխարհանք որի լեզուն մի քիչ կակազումէր, սկսեց  
բառբառել։ (\*)

(\*) Դանարուրիւն. Այս անձը աբդէն մնուած է։

” Ե՛հ օրհնեալ հոգի, խելքդ զլսիդ ժողովիր և  
ոքանի ժամանակդ ձեռիդ է աշխատիր փող  
,,ժողովիր և քո տունդ զարդարիր, որ կինդ և  
”որդիքդ փողերով կուշտ խաղաղ կեանք վարեն, և  
ոթէ ես և ընտանիքս քաղցած մնանք, աղջր մեզ  
ոչի օգնիլ, ո՛չ շուռ կայ բաղդի անիւր, այսօր  
ոեթէ ունեռ ես, բարեկամք և օտարք կրժողովին  
ոքո չորս կողմավ և կ'սիրեն քեզ, բայց ե՛րբ դրժ  
ոբազդութիւն հանդիպեց քեզ, Աստուած ազատի,  
”ամենեքեանք քեզանից երեսները կդարձուցա  
նեն, . . . ուրեմն իզուր տեղը զլուխներս ցաւեց  
”նումնենք և պահանջում, որ մեր քրտինքով վաս  
տակած և զանազան ձանապարհներով ժողոված  
”հարստութենից մի մասը ընծայենք աղջին. հարս  
տութիւնը Աստուծոյ պարզե է, ում որ նա սի  
որումէ տալիս է նորան որ վայելի, չքաւորը պէտքէ  
”մնայ չքաւոր, աղքատը աղքատ և քաղցածը քաղ  
ցեալ. սա յաւիտենական կանոն է, որ Աստուած իւր  
”նախախնամութեամբը մարդկային աղջի խրաքան  
ոչիւր ծնված անհատի ճակատին զրումէ, որը  
”պիտի լինի հարուստ և որը չքաւոր: Եթէ  
”այս կանոնից ով որ գուրս եկաւ և սկսեց խղճալ  
ոազքատին և նորա որդւոյն, նա ընդդէմ է վարփում  
”Նախախնամութեան. ինձ հետ յոյս ունիմ համաւ  
ոձայնվին բոլոր ազգերի մեծատունները առաւելա  
ոպէս մահմետականները և միւս հեթանոս ազգերը:  
ոթէ մեր աղջում պատահումն մի քանի մեւ  
”ծատուններ, որոնք քանի կենդանին ինձ պէս են  
”ապրում, բայց երբ մօտենումն գերեզմանին, կը  
”տակում են իւրեանց զանձի մի մասը աղջին, որանց

”ես խմասուն չեմ կոչիլ այլ յիմար, որովհետեւ  
”ես մեռնելուց յետոյ թող ով որ ուզումէ վայելէ:  
ոնթէ կայ մի ուրիշ կեանք մեր մեռնելուց յե  
տաղ, սորա մասին այդքան զլիսացաւանք տալ ի՞նչ  
հարկաւոր է, միթէ ժամ պատարգից մեք յետ ենք  
”մնում, միթէ զանձանակը իւր կոպէկից զրկվումէ,  
”միթէ մեր մեռներին փառաւոր չենք թաղում,  
”մարդ չեմ սպանում և գողովթիւն չեմ անում,  
”որ գժոխք զնամ. ո՞վ է տեսել սուրբ ձեռքիս և  
”ոորիշի վերայ յարձակիւրիս, կամ ո՞վ է տեսել ինձ  
”այլոց զրամարկը կոտրելիս և փող զողանալիս.  
”կարձամիտ մարդիք ասումնեն աւետարանումը զրած  
”ոէ լեզով սիրտ կոտորելը ու մարդ սպանելը միև  
”նոյն է, ահա քեզ կոյր գատողութիւն. միթէ լե  
”ոզուից գուրս պրծածը չի ցնուում և ցրվում օդի  
”մէջ և երբէք նշյլն էլ չէ մնում. թէ կուզ ա  
”ուուաւուից մինչև երեկոյ իմ հէրս ու մերս անիւ  
”ծես. յիմարաբար ասումնեն որպէս թէ՝ մեր միշոցըը  
”խակոյն ֆոտողբանի մեքենայական զօրութեամբը  
”տակազրվումէ այն սրախ վերայ գէպի որը ուղղու  
”մենք և աղեղի նման սրբնթաց թափանցումէ և  
”ծակում սիրաը. ամենայն բան էլ թէ այդպէս էք  
”հասկանում, վայ Զեր զլիսին. ի՞նչ սիրա, ի՞նչ հու  
”ոդի, աշխարհս մի կարը միս է, ամենայն մարդ դա  
”նակի ո՞ր կումը ուզումէ թո՞ղ կտրէ, ասումնեն սուս  
”ասողը արքայութիւն չի մտնիլ դա էլ մի ջոկ յիշ  
”մարութիւն. օ՛րհնված, եթէ սուս չի ասեմ, կա  
”որողեմ փող աշխատիլ. մեր հայ աղջից հազարից  
”մէին էլչես կարող դտնել, որ ծմարտութենով հա  
”րստացած լինի, և ինչի՞ պէտքէ այս ճանապարհով

ոչ հարստանայ, երբ որ և թագաւորներն էլ փողի  
կարօտ են, Աստուած օրհնի փողը, ով որ սրան  
ունի թէ կուզ ամենատխամար մարդ լինի փիլիսու-  
փայ կդառնայ, թէ կուզ փորումը եւ ու և չլինի  
արամարան կդառնայ. երեկփայ փորը մշջքին կպած  
մաթոսին այսօր փորը հաստ Մատթէոս աղաէ շի-  
նել, երեկփայ անպատճւը այսօր իշխանական պա-  
տուի է հասել, ոչ թէ փողոցներում և հանդէս-  
ներում այլ հենց և Աստուածոյ տանը մէջ: Ասացէք  
ախնդրեմ, մեր քահամայքը ում են շատ սիրում,  
ապաշտում և պատռում, եթէ ոչ աղայի փորին  
նրա կրանին: Եթէ այսակէս զօրութիւն է ունեցել  
փողը, էլ ինչո՞ւ չպէտքէ պաշտենք նորան. ինչո՞ւ  
աշոյլութեամբ վարվենք նորա յետ, թէ կուզ  
արաքեն հայոց ազգի աղքաները, ուսումնարան-  
ները և բարեգործական ընկերութիւնները, իմ  
սիրականը ձեռքից բաց պիտի չթողնեմ. ալս դրամ,  
ողբամ, դրամ ձայնդ շատ ախորժէ, զօրութիւնիդ մա-  
տաղ, կեանքս կտամ քեզ, քանի որ կենդանի եմ և  
մեռնելուց յետոյ կառնեմ և կտանեմ քեզ էն  
կեանք. ինչպէս քեզ ձանանելեմ, էն կեանքումն  
ուել դու հրաշներ պիտի դործես, աֆէրիմ քեզ  
մոկոնողին: Քանի որ կրբանս զարտակ էր, երբ  
փողոցից տուն էի դառնում բարի երեկոյ էի ա-  
սում և պատասխան չի ատանում կնոջցոց և եւ  
որեխերքիցս. իսկ այժմ գեռ չհասած և չմաս-  
տուն, դուրս են դալիս նրանք իմ առաջս և իմ  
սրերանս չբացած իրանքեն սկսում բարեկը և  
ոկրդախառնվել. ահա քեզ հրաշք: Եթէ չես հա-  
ստում ինձ գնանք հայաստան ցոյց տամ քեզ

մեծատուն հայերից ամենազլխաւորին, որի հայրա-  
նունն է Բինամուս Օղեանց, ինչն է պակաս ու-  
նրան, ծերութեան հասակը քիչ է մնացել անցկաց-  
նէ և մտանէ զառամութեան մէջ, միլիօնների  
մեջ ումը գլորվումէ, երկիր և աշխարհ չմնաց յու-  
նրում սիրված չլինի սրա կալուածները. իւր քթա-  
վսոտը շատ է սիրում, քան թէ իւր հոգին, ով  
ոկհամարձակիլի սրանից բան խնդրել յօդուտ եկե-  
ղեցւոյ և ազգի, սա արդար և մեծ դեր է խա-  
ղում կովկասեան հօրիզոնում և միշտ սովորութիւն  
ուունէ գունդ գունդ ոսկիներ ընծայաբերել կաշառա-  
սէր չաստուծուհւոյ որդիներին: Եջմիածնի նորա-  
ոշէն Ճեմարանի այրեցեալ մասը՝ սա իւր հարստու-  
թեան չգիտեմ քանի երրորդ մասով կարող էր  
ովերանորոգել և հենց եթէ կամենայ, մի միլիօնով  
մի նոր Ճեմարան կ'կառուցանէ և նորանում քանի  
ոքանի երիտասարդներ կ'լուսաւորվին, չեմ ասում  
միւս բարեգործական միջոցները: Նա մտածումէ այս-  
պէս: «Եթէ իմ ազգիս սկսեմ լաւութիւն անել  
օտար ազգաց աչքից կընկնեմ և պատուից կ'զրկ-  
վեմ»: Արևս վկայ, որ Բինամուս Օղեանցը շատ  
է հասկացել իւր խեյն ու շառը. մի թէ նա  
այնքան յիմար է, որ իւր ազգին լաւութիւն անե-  
լով, օտար ազգերի աչքից ընկնի. (\*) սուտ ենասում  
ոոր լուսաւոր ազգաց համար այն մարդն է պատույ  
արժանի, որ նախ հետեւումէ իւր ազգին օգնել.  
ասացէք տեսնեմ, ես ի՞նչ պարգև կարող եմ ստա-  
ծանօթութիւն: Այդ բաղդախնդիր Բինամուս Օղեանցը զաղթելով  
կոնստանտինապոլիս, այն տեղից լուր հասաւ, որ այս օքերս, չա-  
րաչար մահուամի մեռել է:

Անալ իմ ազգիցս իմ բարերարութեանս փոխարէն  
ահացած ճշմարտութիւններ շատ կան զրած և  
ասած, ճշմարտութիւնները մեռած տառեր են և  
սխօսքեր, որ զրվել է ու զրվումէ արծաթ չ'սիրող  
ճարդկանց ձեռներով. ինչքան կամենումնեն թող  
ոգրեն, ո՞վ է լսողը. այն որ ես եմ ճանաչել ու  
հասկանում ոչ ոք չ'գիտէ, աշա՛ իմ օրէնքը և  
ճշմարտութիւնը, եթէ կամենումնես դու էլ կատա-  
րեալ ճարդ գառնալ, դէ լսի՛ր: Լաւ է ունենալ  
սպանձ, քան թէ անուն բարի. լաւ է սուտ ասելով  
հազարներ աշխատել, քան թէ ճշմարիտը ասելով  
հազարներից զրկվել: Լաւ է քարասիրտ լինիլ քան  
թէ ողորմասիրո, լաւ է անձնասէր լինել քան եղ-  
որայրասէր, վայ այն մարդկանց, որ աղքանների և  
ստնանիների վերայ կտորչեն և խրեանց քրատն-  
ոքով աշխատած հարստութիւնից մի մասը կ'բա-  
ժանեն յօդուտ կարօտելոց. վայ այնպիսի տղէտ  
մարդոյ համար, որ կ'ասէ թէ՝ Քրիստոնեայք մի մար-  
մին էն և մի հոգի և խրաքանձւը անդամ մի-  
միանց պիտի օգնեն: Վայ նորանց, որ հոգով աղ-  
քատ են և աշխարհը սէրից և մարմնական հեշ-  
տութենից և փարթամութենից հրաժարված, մը-  
տածումնեն թէ՝ ոչ ինչ չունեն և ամենայն ինչ  
ուունեն. վայ այն մարդոյն, որ հեղութեամբ  
տանումէ ամենայն նախատինք և չի զգում  
ուր հոգւոյ մէջ դառնութիւն. վայ նորան, որ  
սպումէ իւր մեղաց համար, վայ նորան, որ քաղ-  
ոցած է արդարութեան և ոչ աշխարհային փառաց.  
Վայ ողորմածաց, որ կերակրումնեն քաղցեալներին,  
արբուցանումնեն ծարաւեալներին, հազցնում են  
մերկերին, ժողովումնեն օտարներին և թողնումնեն

յանցաւորին. վայ որ խաղաղասէր է և այն: Այս-  
պիսի ճշմարտութիւններով, սիրելի, իմ փորս լի-  
ոքըն է, որքան ուզումես թափեմ, բայց պէտքէ այն  
ոէլ ասեմ, որ այս իմ օրէնքին և ճշմարտութեանը  
ծառայում են, ոչ թէ միայն հայոց ազգի մե-  
ծատուները, այլ բոլոր ազգաց, որոնք սիրված են  
երկրային գունափ տակն ու վրայով. կան թէպէտ  
մի քանի մեծատուներ մեր աղգում, որ իմ օրէնք-  
ների քանի մի մասը ոտնակոխ են անում և սխալ-  
մամբ կամ ամաչելով ազգի գանձանակին ընծայու-  
մեն մի քանի կոլոր արծաթ, բայց եթէ այսպիսի  
մեծատուներ մարդկանցից չի ամաչեն, իւրեանց  
տուածը յետ կ'պահանջեն, ճշմարիտը տակմ մեռ-  
նելը լաւ է, քան թէ կենդանութեամբ աչքը բայց  
ուր սեպհականութենից մի բան այլոց ընծայելը  
ոգոնէ մեռնելից յետոյ աչքս չի տեսնիլ թէ կուզ  
ոբոլոր իմ ոսկով և մարգարիտով լիքը սընդունե-  
որըս տանեն ջուրը ածեն, կամ իմ որդիքը և ազգա-  
կանները շուայլութեամբ գործ ածեն և թողնող  
գնացողի անունը անիծեն: Աշա՛ վերջացնումնեմ իմ  
սխօսքը խելքէ գլխիդ ժողովիր և լուռ ու մունջ  
տանդ նստիր, ո՞վ կարդաց քո գրածներդ, ո՞վ հե-  
տեւեց քո խօսքերին, ո՞վ հասկացաւ քո միտքդ, ո՞վ  
ճանաչեց քեզ և վերջապէս եթէ այսօր մեռանես  
ոդու, ինչպէս շատերն են մեռնում, ո՞վ կ'ափսոսայ,  
կամ եթէ այս նեղութեան լուծը, որ կրումես և  
մինչեւ ՚ի մահ ջնջված ես հոգւով և մարմնով,  
ո՞վ ցաւակից եղաւ քեզ և միթթարեց քեզ խրա-  
խուսելով և յոյս տալով. դու շատ ողորմելի մարդ  
ես, որ այդքան կուրութեամբ կ'սիրես քո ազգը

„նորա կրօնը և նորա լեզուն. թողի քո որդիկեդ մնա  
,,ուանան հայերէն խօսալը այլ սովորեն գաղղիերէն  
,,Անդղիերէն և միւս Եւրոպական լեզուները, որ  
ոքաղցած չմեռնեն, հայոց լեզուն հարկաւոր է  
,,միայն ծածուկ տեղերում, անշնորհք մարդկանց  
,,շրջանում և ոչ թէ դարւոյս ուսաւոր մարդկանց  
,,մէջ: Ես՝ քիչ է մնում գետինը մանեմ երը իմ կինս  
ոիմ գուլերների և կովերնանդկայիս մօտ սկսումէ  
ոինձ հետ հայերէն խօսալ, իմ երեխերքս այսպէս  
,,եմ կրթել որ մի բառ չի հասկանան հայերէն:  
ոերկու հայ միասին երբ խօսումենք մեր լեզուով,  
,,եթէ մի օտար ազգի որդի է պատահում, իսկոյն  
,,ամաշումենք և լեզուներս փոխում, նորա լեզուաւ  
ոբարբառում, որ չի համարի մեզ չլուսաւորված:  
,,կրկնումեմի աչքդ լաւ բաց արա՛ և խելքդ զրւ-  
ովիդ ժողովիր և խելացնոր մարդոյ նման մի՛ խօսիր  
,,և մի՛ զրիր վայր ու վեր: Քանի որ իմ ընկերներս  
ոայսինքն Հայոց Ազգի մեծատունները իմ օրէնքիս  
,,իմ վերոյիշեալ Ճշմարտութիւններիս կ'ծառայեն,  
,,թո՞ղ ձեր Մարդասիրական Ընկերութիւնը ոչ ինչ  
որանի չյուսայ, առանց փողի ոչինչ չիք կարող յա-  
,,ռաջ տանել, տարենը մի անդամ ընդհանուր ժո-  
ուղով կազմելով և այդ Ընկերութեան կոսէկների  
,,հաշիւը տեսնելով, նա իւր նապատակին չի կարող  
,,հասնիր շատ զրելով և խօսելով փոր չի կշտանալ՝  
,,թէ կուզ երկնքից ասաղեր ներքեւ բերէք, վերջը  
ողուրս կզայ մի սուտ աղքասէր ոմն, զօրօրինակ, ա-  
,,նունը դնենք Զրախօսեանց, և կ'սկսէ ոչ աջ և ոչ  
,,աշեակ նայելով ձեր արած բարեգործութիւններին  
,,հազցնել մի սև զգեստ և չարախնդաց օրագիրների

,,միջոցաւ 'ի հանդէս դուրս բերել ազգի և Ընկե-  
որութեան Անդամոց սրտերը վիրաւորել, ահա՛ ձեր  
ովարձը և Ընկերութեան ճակատագիրը: Ձեր Ընկե-  
որութիւնը նմանումէ մի չքաւոր մարդոյ գերդաս-  
տանի, որից անբաւականութիւնը, տժգոհութիւնը  
,,և անուանաբեկութիւնը պակաս չի լինիլ բայց եթէ  
ոմի քանի հազար այս չքաւորի ձեռքը ընկաւ, յայն-  
,,ժամ նորա կեանքի անիւը կ'փոխվի և խաղաղու-  
ոթիւն կ'տիրէ նորա աան մէջ: Ուրեմն այդ Ընկե-  
որութեան դյուոթիւնը կախված է մամնայից, այս-  
ոնքն ինձանից և իմ ընկերներից, եթէ այդպէս է  
,,ասա ուրեմն վայ Ձեր զլսին, որովհեաւ մեր քսակ-  
,,ների բերանները այնպէս չի փակված, որ միւս  
,,անդամ բացուի: Աւետարանը ասումէ ուր զէշն իցէ  
,,անդր ժողովեսցին արծուիք, սա Քրիստոսի վերջին  
ոգալստեաննէ վիրաբերում, բայց ես կասեմ Ձեր Ըն-  
,,կերութեան համար է ասած, որովհեաւ եթէ  
,,Մարդասիրական Ընկերութիւնը ունենար մի հա-  
որուստ զրամարկդ, ամենայն կողմից նորա վերայ կը-  
,,ժողովիչին մեղրի ճանձի պէս իմաստուն վարժա-  
,,պէտներ և խորհրդատու անձննք, և նորա ուսում-  
,,նարանի և միւս գործունէութեան շրջանը այդ-  
,,պէս սուզ և ասպարդիւն չիր երեալ հետապէս  
,,մարդկանց ազքում: Տեսա՞ր որ առանց մամնային  
,,ոչ մի բարի բան չի կարելի աշխարհքում ստեղծել  
ոթողթէ մի այդպիսի հռչակաւոր և կայսերահաստատ  
,,Ընկերութիւն պահպանելի նա էլ բագուայ մէջ, որոյ  
,,ժողովուրդը որքան օր լսա օրէ բազմանումէ, այնքան  
,,անմիաբանութեան նսեմացած հօրիզոնումն է սիրում  
ոբնակվից: Դուք ասումէք որպէս թէ, կ'զայ ժամ-  
,,մանակ երբ ճրագով ման կ'զանք և չենք գտնել-

սայդ միջոցիցը որն որ ձեր ձեռքումն է այժմս: Ես սիմ հոգին, մարդից յիմար բան չի ստեղծել Աստուած այս աշխարհումն, ես ոչինչ այնքան չեմ սիրում, որքան իմ մանեթներին ու ոսկիներին, միւնթէ իմ սիրեկանիս կ'թողնեմ, որ գուրս գայ ձեռքից, որ ես էլ մնամ վերջը աղքատ և տնանկ. ասուել եմ, ասումեմ և ասելու եմ, որ եթէ այս կեանս քում չկարողացայ փայելել իմ գանձը, անպատճառ սպիտի յետս տանեմ այն կեանք, մեծատունը շատ հիշտ կանցինայ իւր ոսկով և արծաթով այն սկեանք, քան թէ ուղտի որդին ասեղի ծակով:

Ո՞ն ևօն արասցէ ինձ Աստուած, եթէ մին բան հասկացայ քո այդքան ճոռամարանութենից, ընդհատեցի ես մեծատունի խօսքը, դու որպէս երեւում, միտք ունես փաստաբան դառնալ Աստուածոյ և մարդկանց մէջ. և ամենայն ջանք դործ ես ածում, որ քո անհիմն քըննադատութեամբդ քեզպէսի մոլորեալ հարուստների շարքում համարես և բոլոր հայոց աղջի բարեմիտ և ողորմասիրտ մեծատունների, քեզպէս մարդիկ արդար շատ կան, որովհետեւ անտառները (մեշէք) առանց աղուէսի չեն լինում, այնպէս և առանց որոմի ցորեն չի բուսանում, բայց ամենայն բանի վերջն է գովելի. որքան ուզումես կեր, խմիր, զուարչացիր, փարթամացիր և ուռի՛ր դորտի պէս, բայց տրաքվելի ժամանակին ես քեզ հետ կ'խօսեմ. քանի որ մարդ առողջ և խաղաղ կեանք է փայելում, մոռանում հիւանդութեան և նեղութեան օրերը և քեզպէս միշտ դունչը խոզի պէս աղտեղի և ժահանականութեանց մէջ խրած չի կամենում:

Երբեմն դէպի վեր բարձրացնել զլուխը և տեսնել Աստուածոյ փառաց նշաները, բայց երբ որ ժամանումէ օրհասը, նա մլան պէս չ'զիտէ կատուի ձեռքից ո՞ւր փախչի և ո՞ր ծակը մանէ, նա յայնժամ փետրազուրկ կիսակենդան թռչունի պէս կամենումէ վեր վեր թռչել և կրկին վայր է ընկնում: Գիտե՞ս, Պարոն, այն պատերազմի ժամանակը որ պատահումէ կեանքի և մահուան մէջ, ի՞նչ զրութիւն է ստանում մարդ, Աստուած աղատի քեզ և քեզպէս մարդկան աղջի թշնամիներին, ես մահուան ճաշակը թէպէտ չեմ առել, բայց շատ մեռանողներ եմ տեսել և հարցուփորձ արել նորանցից, թէ ի՞նչ են զգում և որպիսի ընտրողութեան մէջ են.— Հառատացի՛ր հարուստ աշխարհական, որ Ճշմարիան եմ ասում, նոքա ամենեքեանք որպէս թէ նոր փիլիսոփայ դարձած, վկայումէին թէ՝ այնպէս չունքը էր ապրել՝ ինչպէս նոքա ապրեցան և ափսուսումէին, որ կրկին չեն կարողանալ կենդանանալ, որ լաւ սկսեն ապրել. ես հարցնումէի նոցանից թէ լաւ ապրելը ո՞՞ն է. նոքա պատասխանումէին թէ մեղքի կամ խղձի ծակոց չունենալն է, որ այժմս ծակումէ և խորովում և հնար չունիմք հանդատութեան: Այսպիսի մեռնողներից մինը ինձ պատահեց 1852 թուականում, Տիֆլիս քաղաքում, քեզպէս հարուստ մարդ էր, բայց քեզպէս փոր չունէր, հալլիլւէր և կմախք էր դարձել. սա երբոր երկու ժամից յետոյ պիտի հոգին աւանդէր, արտասուալից աչօք այս քանի խօսքերը արտասանեց, որ մինչև ցայսօր չեմ մոռանում:

” Սիրելի բարեկամք, ասաց նա, աշխարհիս վերայ

Աբովը ազգերը և անհատները, խելօքութիւնը և  
անխելքութիւնը, խաղաղութիւնը և պատերազմը  
ամենը խաբերայութիւն է և հենց ոսկերքը տկորա-  
վում էն կամ հեռանումն մնից, գիտունը և յի-  
մարը հարուստը և չքաւորը զարմանալի կերպիւ-  
նմանումն միմեանց. երբ ոսկերտիքը յարմարու-  
մենք, երբէք նոքա չեն զանազանում միմեանցից,  
ոչ հարուստը չքաւորից, ոչ իշխանը հասարակ  
մարդից և ոչ հայը թուրքից, սա պէտքէ չ'մոռա-  
նայի ես քանի որ առողջ կեանք էի վայելում:  
Խնձ այժմ այնքան չեն միմիթարում այն լնծա-  
նյարերութիւնները, որոնք կտակելեմ յօգուտ որ-  
ոբոց և այրեաց, յօգուտ ուսումնարանաց և եկե-  
աղեցական պաշտօնէից, որքան կ'միմիթարվէի, երբ  
որ սիրած կ'լինէի ես իմ պատերակից քրիստո-  
նեայ եղբօրս, ինչպէս իմ գանձս և անձս էի սի-  
րում: Ա'ս տկարութիւն և անհեռատեսութիւն  
մարդկային բնութեան. ո՞ւր ես գանձ, ո՞ւրէ քո  
զօրութիւնը ե'կ փրկի՛ր և ազատի՛ր ինձ, ես իմ  
անեռքերով խնդրումէի այլոց սիրտը ուրախացնել  
քեզանից մի փոքրիկ մասը բաժանելով, իսկ այսօր  
հողը մեծ պատիւ ունէ, որ իմ մարմինը պիտի  
ծածկէ, քան թէ դու անիծեալ, դու քանի մարդ-  
կանց գլուխ ես կորուսել, որքան քաղցր էիր դու  
ինձ համար, այժմ դառն ես, և զզրւելի: Ա'ս, եթէ  
հնար լինէր ինձ մի քանի ժամանակ կենդանու-  
թեան օրեր վայելել, հաւատացէք բարեկամք, որ  
մարդասիրութիւնը և եղբայրսիրութիւնը իմ  
կեանքիս ուղեցոյցը պիտի շինէի, սուտ քրիստոնէի  
անուն կոելով ինձ վերայ 55 տարի հեթանոսաւ

կան կեանք վարեցի, իսկ այժմ մեռանումեմ և  
ոչդիտեմ ինչով միմիթարվեմ:

Ահա՛ քեզ օրինակ, հարուստ աշխարհական, որ-  
քան կամենումն սիրի՛ր քո փողը բայց իմացի՛ր, որ  
քո կեանքդ էլ պիտի վերջանայ: Աստուած նոյն  
Աստուածն է և նորա որդիքը հասարակութեան  
մարդասէր և եղբայրասէր անդամներն են, որոց  
օգնութեամբը անսասան կ'մնայ, և մեր Մարդասի-  
րական Ընկերութիւնը:

Սիրելի՛ ընկերակից իմ, վերսիշեալ Քահանայի  
և Մշեցի հարուստ աղայի հեղնական և աններելի  
վայրաբանութեանց մեջ, իւրաքանչիւրը Զեղանից  
կարողէ նշարել դժբաղլաբար և ճշմարիտ խօսքեր,  
եթէ կարողանանք լաւ քննել մեր սրտերը և ճա-  
նանչել մեր անձները, պիտք է կամայ ակամայ խօս-  
տովանիմք, որ մեք ևս որպէս մարդ բնութենապէս  
մինոյն անտարբեր և ադահ դրութեանը ենթարկ-  
ված անկուշտ մարտիս պէս մեր ցանկութիւնները  
ոչ մի բանով չեմք կարողանում լցուցանել: Բայց  
մի և նոյն ժամանակ չպիտի ուրանամք, որ մեր աղ-  
քում կան շատ բարեսէր անձննեք ամենայն դասում,  
որոնք ըստ չափու կարողաւթեան չեն զշանում ցոյց  
տալ բարի զգացմունք բանիւ և գործով: Հարուստ  
աղայի հեղնական վայրաբանութիւնները իմ սիրտս  
խոր խոցել են և այս ցաւը չեմ կարող յետս տանել  
մինչեւ որ մի քանի խօսք չեմ ասեմ Զեզ, իմացէք, որ  
սա վերջին անգամն է, որ Զեր գլուխը ցաւեցնումեմ  
իմ շատախօսութենովս:

Սիրելի՛ք. Ահա՛ երկոտասան երրորդ տարին է, որ  
մեր Ընկերութիւնը Ամենաողորմած ԿՈՅՍԵՐ հովա-

Նաւորութեան ներքոյ շարունակումէ իւր գործունէւութիւնը և իւր ծանր քայլերով օր աւուր դէպի յառաջէ զնում, ցոյց տաղով իւր պատուղները այս տեղ և զանազան քաղաքներում: Ընկերութեան Խորհրդական Անդամոց մի քանիսի գործունէութիւնքը, ինձ որպէս Ատենադպրի նոյն Ընկերութեան և Զեղ որպէս միրելի Անդամոցդ, յայսնի են, այնպէս, որ տեղոյս հայ հասարակութեան համար անմոռանալի յիշատակ են թողած:

Օրիորդաց և տղայոց ուսումնարանները այսօր գրկախառնած Առորբ եկեղեցւոյ հետ ՚ի միասին խոստանումեն պատրաստել հայոց ազգի համար մայրենի լեզուաւ թոթովող զաւակներ:

Այն երկու բարոյական շնութիւնքը, մէկը մարդարան, իսկ միւսը քաւարան, եթէ չեմ սխալիում, մեր աչքին այսօր մի սովորական կերակուրի պէս օր ըստ օրէ, որպէս թէ անհամանում են և միայն նոյցա արտաքին շքեղութիւնքն են աւելանում, իսկ ներքինը որ է բարոյականը, հետզհետէ նուազում:

Այս երկու ամենահարկաւոր շնութիւնքը ի՞նչ կերպով կարողեն համսել խրեանց նպատակին, եթէ ոչ ուսումնարանաց մէջ մեր գեռափիթիթ մանկանց հոգիները զարգացնել քրիստոնէավայել ուսմունքութիւնը:

Բայց եթէ այս ուսումնարանների նիւթաւոր հնարները չափաւորված և սահմանափակված լինեն և օր ըստ օրէ նուազվելով չկարողանան զիտութեան և իմաստութեան առաւ աղբիւրներ բղխեցնելով, մեր ազգի բանաւոր այգւոյ մէջ հոտաւէտ ծաղիկներ, քաղցրահամ պտուղներ բուսուցանել,

յայնժամ՝ ասացէք խնդրեմ, կայ այլ իմն հնար որ մեր սուրբ հաւատը կենդանի մնայ և մեր որպէս պէտք ստանան կատարեալ ուսումն:

Եթէ մի ազգի ժողովուրդը լինի խաւարասէր, ուսումնատեաց, ազգատեաց և անմիաբան. եթէ նորա իշխանքը և մեծատունքը տեսանելով իւրեանց զըրկանքը, մի և նոյն ժամանակ ինքեանք հոգեկորոյս փարթամութեամբը կուրացած անկուշտ մարախի պէս օրերը անցուցանեն առանց բարեգործութեան, միմիայն իւրեանց զանձուց հաշիւը տեսնելով հաւանազօրդ, որ այսօր գայ և վաղիւն ո՛վ զիտէ ինչ պիտի լինի. ասացէք խնդրեմ, վերականգնելոյ յոյս կ'մնայ մի այդպիսի վերընկած ազգի համար: Աստուած հարսութիւնը պարզեւումէ զեղ, ո՛վ մեծատուն հայեր (Խօսքս անբարեգործ մեծատանց է վերաբերում) ոչ թէ զեր արժանաւորութեան փոխարէն և ոչ այն սպայմանով, որ դուք միայն վայելէք աշխարհիս բարութիւնները, այլ և որ դուք զեր կողմից մի և նոյն առատութեամբ լցուցանէք զեր ազգի և զեր հաւատակից տկար և կարու եղբարց կարիքը. եթէ չէք թագուցանել զեր զանձը, երբէք մտատանջութեան և երկիւղի մէջ չէք մնալ և արծաթ սիրողը Աստուած չի կարող սիրել. արծաթասէրը եղբայրատեաց է, ազգատեաց է, ճշմարիս քրիստոնեայ չի կարող կոչվել եթէ արծաթասէր է: Ազատեացէ Աստուած զեղ այն արծաթսիրութիւնից, որոյ մասին Քրիստոս 1875 տարի առաջ վայ կարդաց Ժաւատ մեծատանց համար: Կարծեմ մեր ոչ մէկի ձեռքում չկայ ապահովաթուղթ այն մասին որ յետ մեր մահուան պիտի հետներս առնենք ու

տանենք էն կեանք մեր զանձերը: Ես ձեր ծիծաղը  
կ'շարժէի, եթէ վճռողաբար ասէի. թէ՝ բաժանեցէք  
աղքատաց բոլոր ձեր կայքը, բայց պիտի զարմաց-  
նէք ինձ եթէ չհաւատաք, որ ինչքան այժմ ունէք՝  
հազարապատիկ այնքան ևս եթէ ունենաք, դար-  
ձեալ պիտի ասէք թէ ոչինչ չունիմք. ագահը կը շ-  
տանալ չգիտէ:

Պուք, մեծատներ և միջակ կարողութեան տէրեր,  
հանեցէք ձեր մաքից այն սխալ կարծիքը որպէս  
թէ այն առատ պարգևները երկնային հայրը շնոր-  
հել է ձեզ, որ գուք զիշեր ու ցորեկ ձեր միտքն և  
հոգին աշխարհիս ունայն փարթամութեան և ան-  
կուշտ ագահութեամբ տուած, բարդէք ձեր գան-  
ձերը ում համար, որ առատօրէն վասնեն ձեր սե-  
րունդը ձեր մահից յետոյ, ձեր որդիքը և նոցա  
անիրաւ հոգաբարձուքը: Լաւ մոտածեցէք, որ արքա-  
յութիւնը պիտի ժառանգեն սգաւորները աղքատ-  
ները, հեղերը խաղաղարարները՝ ի վերջոյ և մար-  
դասէր մեծատուները: Աղաջումեմ, ասացէք ինձ.  
ի՞նչ նշանակութիւն ունի երկրիս վերայ այնակիսի  
մեծատունը և փարթամը որ հանդերձեալ կեանքի  
վերայ յցս չգրած, իւր օրերը անհանգիստ և ան-  
միսիթար հոգւով է անցուցանում. իսկ եթէ կա-  
մենում ժառանգել և արքայութիւնը, ուրեմն քա-  
նի կենդանի է մարմնով, ի՞նչ հնարք պիտի գործ է,  
որ կարողանայ հաշտվել իւր խղճի հետ, որ կարու-  
զանայ կենդանանալ և հոգւով:

Մարդասէր մեծատուններ են եղել զանազան  
քաղաքներում, եղել են և կան այժմ և մեր աղ-  
քում, որոնցից քանի քանի անձինք, ուրախ սրտով,

զուարթ երեսօք և հաստատուն յոյսով, աշխարհիս  
հետ մնաս բարեաւ անելով թողել են խրանցից  
յետոյ բարի անուն և կենդանի յիշատակներ: Այս  
վերջին ժամանակներում Ոտոսաց, Օսմանեան կամ  
Եւրոպայու ո՞ր քաղաքում չէք գտնիլ հայի որդին  
որ իւր ուսումբ շարունակումէ կամ Ճեմարաններում  
և կամ արուեստանոյներում օգնութեամբ և օժան-  
դակութեամբ աղքասէր մեծատուն հայերի. իսկ քանի  
որդիներ այժմ դարձած են ականաւոր անձնիք,  
դուք ինքներդ լաւ զիտէք և կճանաչէք: Այսպիսի  
առաքինի մեծատանց յիշատակը օրհնվումէ յաւի-  
տեանս յազգէ յազդ, որպիշետե նոցա շինած տան  
հիմքը աւագի վերայ չէ հաստատված, որ մի աշխար-  
հակործան երկրաշարժութեամբ ճարակ լինելով, մի  
վայրկենում քար ու քանդ լինի և տաժանելի հնարք-  
ներով վաստակած և իրագործած մեծ մեծ գու-  
մարները աւերակների տակը ոչնչանայ. նոցա եր-  
կու ու երեք յարկեայ տուները և պալատները, նո-  
ցա պանդոկները կամ քարվանսարեքը, հիւանդա-  
նոցները և ուսումնարաններն են, որոց մէջ շատ  
տարիներով քրիստոնէից տղայքը և երխոսասրդքը  
շարունակում են իւրեանց կրթութիւնը: Նոցա ժա-  
ռանդները անհամար որդեգիրներն են և հազարաւոր  
քաւոր զերդաստաններ, որբեր և տնանկներն են:

Մարդ եթէ ոչ մի յոյս չունի այս աշխարհում  
ապադայ կենաց վերայ, ուրեմն չունի և կեանք մար-  
դոյ և չի ապրում որպէս բանական. եթէ մեք հա-  
ւատում ենք, որ մեր նախահայրը մի հայր է եղել  
և ոչ երկու հայր, ուրեմն չպիտի ուրանանք, որ մեք

ամեննքեանքս մի հօր որդիք ենք, եթէ որդիք,  
ուրեմն և եղբարք: Աիրենք միմեանց, որովհետեւ  
եղբարք ենք մի հարազատ հօր ծնունդը, միաբան-  
վինք, որովհետեւ մի աղդ ենք: Բնականաբար այս-  
պիսի սէր և միաբանութիւն կարող ենք տեսնել հե-  
թանոս և վայրենի աղգաց մէջ, բայց հայեր,  
բացի սրանից մենք Քրիստոնեայ եմք, խաղաղութիւն-  
և հանդիսատ ենք վայելում Քրիստոնեայ թագաւորի  
հովանաւորութեան ներքոյ. ուրեմն ի՞նչ բանով  
մեք կարողենք արդարանալ Ասուծոյ և մարդկանց  
առաջին, եթէ ճշմարիտ Քրիստոնեայ չեմք: Եթէ  
մենք Քրիստոնեայ եմք, ուրեմն պիտի լինիմք Քրիս-  
տոնեայ ոչ միայն լոկ անուամբ, այլ հոգւով,  
եղբայրսիրութեամբ և Աստուածազաշութեամբ:  
Խմացէք, որ Քրիստոս իւր արքայութիւնը պատրաս-  
տելէ մանկանց և տղայոց համար ասելով թէ  
ոյայդպիտեացդէ արքայութիւն երկնից: Սրանցից  
քանի հազարներն են կորչում և փշանում առանց  
ուսման և լուսաւորութեան մեզ յայտնի չէ, այս  
միայն զիտեմք, որ կորածների թիւը շատ է քան  
թէ գտնուածներինք: Հաւատացէք ինձ, ովլ իմ հա-  
ւատակից եղբարք, որ դորանից ոչ մինը չի զրկվել  
արքայութեան ժառանգութենից, եթէ իւրեանց ար-  
քուն հասակում քրիստոնէական սկզբունքներով  
մնանին, բարգաւաճին և զարգանան, բայց աւաղ.  
շատերը կորան, կորչումեն այժմ և կկորչեն, եթէ  
այս խղճալիները նիւթական կարողութիւնից զրկված  
անհայր և անմայր մնալով, աշխարհիս զանազան  
անակնունելի հանգամանաց սուր ժանիքներին մատաղ  
դարձած՝ չկարողանան խաւարային կեանքից աղատվել

և մտանել 'ի լոյս Աստուածգիտութեան: Խնդրեմ  
մի փոքր ևս համբերէք և ես Ձեզ կազատեմ իմ եր-  
կարաբանութենից:

Խւրաբանչիւր անհատ իւր ծննդեան օրից սկսած,  
քանի որ կենդանի է, չարաչար աշխատում է, որ վա-  
յելէ այն ամենայն բարութիւնները, որ Աստուած  
պարզեւել է և պարզեւոմէ միշտ մարդկային աղգին,  
բայց կամենումեմ ասելի որ այս ամենայն բարիքները  
չեն կարող ստուգապէս զուարձացուցանել մեզ, եթէ  
մեք ինքեանքս չլինենք բարի, եթէ մարդ բարի չէ  
և կամենումէ վայելել Աստու ծոյ պարզեւները, նա  
զող է և աւոզգակ. առացէք խնդրեմ ի՞նչ զուարձու-  
թիւն ունի այն մարդը, որ ինքը բարի չէ, բայց ին-  
քը բաղդի բերմոնքով, կամ իւր քրտամբ աշխա-  
տած հարասութիւնը վառքը և պատիւը վայելումէ,  
չունենալով ոչ մի հոգեկան զուարձութիւն: Գուք  
ինձանից լաւ էք իմանում, որ մեր կեանքի զուար-  
ձութեան սկիզբը և վերջը բարեպաշտութիւնն է,  
առանց որոյ ոչ ոք չի կարող լինել երջանիկ. Ճշմա-  
րիտ է բարեպաշտութիւնը փողոցում չի ծախսում,  
որ փողով առնենք ու վայելենք նորա պտուղները՝  
այն բանը որ աժան է ծախսում, նորան պատիւ չունէ:  
Մեր բնութեան ամենազիստաւոր թոյլութիւնը նա է,  
որ պատգամաբեր Մովսէս մարդարէի մինչեւ Սինայ  
սարից վերագաւնալը, հաւատադրուժ Խարայէլացւոց  
պէս արծաթից որթ ենք կազմում և նորան պաշ-  
տում, այլ ինչ վերաբերումէ բարեպաշտութեան  
հրաշալի օրինակներին և Աստուծոյ պատուիրանք-  
ներին, սրանց խապառ մոռանումենք: Եթէ մարդ  
բարեգործութեան հետ մասնակցութիւն չունէ, եթէ

իւր անձը առաւել է սիրում, քան թէ իւր հոգին թող նա որքան կամենում ուտէ, խմէ, զգենու շնէ, խաղայ, ամբարները և մնդուկները լցնէ ոսկով և զանազան թանկագին բաներով, եթէ ինքը անարժան է այս բարութեանց, նորա հոգին դժուար թէ կարողանայ զուարձանալ նրանցով. որովհետեւ խղճամանքի բարի վկայութիւնը միայն կարող է բերկրեցուցանել մարդոյ սիրով, ո՞վ որ այս վկայութիւնը չունի, նա չունի և ճշմարիտ ախործ ինչ բարեաց:

Այս բարութեան երջանկութենից զուրկ են և շատերը մեր ազգի այն ուսանողներից, որոնք համարում են իւրեանց գիտնականների շարքում և որոնք հրաժարված ազգային միաբանական գործերից, գիշեր ու ցերեկ աշխատումն բարձր աստիճան մարդկանց հորիզոնում կեանք վարել, ժամանակ ժամանակ քարեր արձակելով միաբանական խումբի անմեղ անդամոց ազգօգուտ շնութեանց և գործունեութեանց վերայ: Վայ այն միամիտ և բարեսէր անձի համար, եթէ այդ վերջինը չունի ձեռքին համարանական վկայաթուղթ և համարձակվում դիմել դէպի վերոյիշեալ իմաստակները. կամենալով բաղխել նոյցա ողորմութեան դուռը: Բայց երբ ՚ի տեղի ողորմութեան, բացվում նոյցա սրալեցու բերանը յայնժամ դուք երևակայեցէք բարեսէր մարդոյ զրութիւնը, նա հրաժարվում նոյցանից որպէս մի անօդուտ և հոտած անդամոց, նա անիծում այն ուսումը որ սովորեցնում երխասարդներին լինել չափից առաւել անձնասէր, ինքնահաւան, բարձրամիտ, ազգատեաց զրախօս և շատախօս: Մարդասիրական Ընկերութեան Անդամոց մի քանիսը դիմեցին

այս տարի գէալի մի քանի հատ այդպիսի սուտ սովիեսաները այն յուսով, որ դոքա մտանելով Ընկերութեան անդամոց շարքը կարողեն տալ Ընկերութեան մի նոր կենդանութիւն իւրեանց մասնաւոր ընծայաբերութեամբ և ազգաշահ իւրհրդակցութեամբ. բայց աւա՛զ, ՚ի տեղի յօժարամիտ կարեկցութեան և անձնանուէր ազգասիրական արձագանքի, անդամք լսեցին միայն հնչիւն, որ սովորութիւն ունեն արձակել դատարկ տակառները: ՚ի հարկէ մենք չենք կարող խառնիլ սրանց շարքում այն ուսանողներին, որոնք արդէն յայտնի են որպէս լուսատու ճրագ իւրեանց բարի բնութեամբ և ազգաշահ գործերով:

Բայց նա ո՞վէ, որ միշտ պատրաստ է առնել բարի և հետեւում չարից հեռանալ. նա այն մարդնէ, որ երկնչում է Աստուածանից և սիրում նրան, և ո՞վ կարող է սիրել Անտուծոյն ըստ արժանոյն, եթէ ոչ բարի քրիստոնեայն, ուրեմն մարդկային ազգում ոչ ոք երջանիկ կեանք չի վարում, բայց բարի քրիստոնէից, որոյ բարեգործութիւնները առաւել են ուրախացնում նորանց, քան բարի կարծած գործերը այլոց մարդկանց, որոնք զուրկ են ճշմարիտ քրիստոնէի երջանկութենից:

՚ի խորոց սրտի աղաչեմք առ Աստուած, որ նա իւր ամենառատ զթութեամբը և ողորմութեամբը շնորհեացէ երկար կեանք մեր Ամենառորմած ԿՈՅՍԵՐ ԱՂԵՔՍՍՆԴԻ ՆԻԿՈԼԱՅԵՎ.ԶԻՆ, որոյ հայրական խնամոց և հովանաւորութեան ներքոյ վայելում մեր ազգը ՚ի խաղաղութեան սրահեացէ մեր հոգեոր Հօր ԱՐՔՈՅՆ ԳՐԻԳՈՐ ԼՈՒսաւորչի աթոռը

Հաստատուն, որոյ տիտղոսը կրումէ այսօր մեր Ընկերութիւնը իւր ճակատին. զօրացուցէ և անսասան պահեսցէ մեր Վեչելքին ԿԱԹՈՂԻԿՈՒՄԻՆ, որ տիւ և գիշեր անխոնջ աշխատումէ տարածել լուսաւորութիւն իւր աղջի մէջ ուսումնարանաց թիւր բազմացուցանելով: Կեցցէ՛ Հայոց աղջր և մեր ԿԱՅՍԵՐԱԿԱՍՏԱՏ Մարդասիրական Ընկերութիւնը՝ի յաւիտեանս անշարժ և պարզեեսցէ նորա Անդամներին առողջութիւն, յաջողութիւն և երջաննկութիւն աստեղ՝ի հանդերձելումն, ամեն:

Անդամ և Արևելական Ա. Վարչական հանցան

Ճառ ասացեալ՝ ՚ի Սարգսէ Վարշամեանց ՚ի 25-Ն  
Յունվարի 1876 ամի առաջի Ընդհանուր Ժողովոյ  
Սարգասիրական Ընկերութեան:

Սերելիք, Դուք զիտէք, որ այսօր համարեայ առևն  
ազգ շարժման մէջն է: Նթէ այդպէս է, ուրեմն Հայ  
ազգը ի՞նչ է անում: Դուք կարծեմ պիտի ինձ պա-  
տասխանէք, թէ Հայ ազգն էլ կամենումէ տղիտու-  
թեան քնից զարթնել և ուղիղ ճանապարհով յա-  
ռաջադիմութեան նպատակին հասնել: Ես էլ իմ  
կողմանէ կ'վկայեմ թէ՝ այդպէս է: Բայց պէտք է  
գիտենանք, որ Քրիստոնէի յառաջադիմութիւնը, եթէ  
ստոյդ բարոյականութեան վերայ չի հիմնուի, չի կարող  
հասնիլ իւր նպատակին:

Այդպիսի յառաջաղիմութեամբ միայն հոգին  
անունդ կընդունի, միտքը կ'զօրանայ և բարին չա-  
րից արդարն անիրաւից կ'որոշուի:

Եթէ ուղենանք ծաղկեցնել և երջանկացնել մեր  
հայրենիքը, պէտք է ունենանք ճշմարիտ քաղաքակալը՝  
թութիւն, որ ուղիղ ճանապարհով, սիրով, միաբա-  
նութեամբ և խաղաղութեան հոգւով զիմենք գէպ  
'ի բարին և զէպ 'ի զիտութիւն, որ կարողանանք  
ճանաչել և վճարել մեր պարագը մեր Ստեղծողին, մեր  
թագաւոր կայսրին, մեր անձին, մեր ծնողաց, մեր  
հայրենեաց, մեր բարեկամաց և բոլոր մեր նմաններին։  
Ուստի երբ մեր յառաջադիմութեան զլիսաւոր կէտը  
մեր բարոյականը կտոր մեր մասաւոր և բարոյական  
կատարելութիւնը կինի, յայնժամ այնպէս կսիրենք  
մեր հայրենիքը և մեր նմանները, որ մեր անձին շա-  
հերը անգամ կզոհենք նրանց օգտի համար։

Բնութեան հիանալի կարդն է, որ բոլոր արարածք միմեանց սիրելով և միմեանց օգնելով, ներքին և ընդհանուր ներդաշնակութիւն կամ համաձայնութիւն են կաղմում:

Ինչպէս և բոլոր համազգի էակներ միմեանց հարկաւոր լինելով, չեն կարող ապրիլ առանց փոխաւդարձ օդնելու:

Եթէ լաւ նկատենք, կուեանենք, որ այս աշխարհքը մի ընդհանուր սեղանէ զոհի, որոյ վերայ շարունակ ստեղծուածների անձնազոհ նուիրումներ է լիւ նում միմեանց փոխարէն:

Ուրեմն մենք արդէն հասունացած երիտասարդներս ի՞նչ ձանապարհով կարողենք լինել ճշմարիտ քաղաքակրթեալ և հասնել մեր նպատակին, եթէ ոչ միութեան կապով, անդադար Աստուծոյ տունը ժամանելով և քարոզութիւն լսելով, կենդանի կեանքից վեր առած քարոզութիւն եմ ասում, ճշմարիտ քրիստոնէի կեանք վարելով և ընթերցասիրութեամբ:

Այսօր դժբաղդաբար աւետարանական քարոզութենից մեք ամենեքեամքս զուրկ ենք. սակայն Աստուծ պարզեել է մեզ մի այնպիսի ձանապարհ, հնարք կամ միջոց, որով եթէ կատարվեց այն երազները, որ ժամանակ ժամանակ մէկը մեզանից տեսնում է իւրաքանչիւր տարի այս դաշիճում զեղ պատմում, յայնժամ մենք կլինենք միաւորված անխղիլի կապով, յայնժամ մենք հասացնելով մեր միութեան դրամարկղը, կունենանք և զիտնական անձինք քարոզութեան և ուսուցչութեան համար, յայնժամ յոյս կայ, որ շատանան և մեր ազգում ճշմարիտ քրիստոնէայք: Բայց ո՞րն է այն միջոցը որ

այսօր վայելում ենք. Նա մեր ԿԱՅՍԵՐԱՀԱՍՏԱՏ Մարդասիրական Ընկերութիւնն է:

Աերելիք, մեր բոլոր ազգութեան հորիզօնում այդպիսի հաստատ և ասպահով Ընկերութիւն, եթէ ճրադրով ման դանք՝ չենք կարող գտնիլ. այդպիսի ազնիւ անուն, կոչումն և սրբազն պարտաւորութիւն ոչ ոք չկ տալ մեզ: Նա իմ կարծ զատողութեամբս, Ընկերութեանս իւրաքանչիւր անդամի կոչումը և սպաշտօնը շատ մեծ և յարգելի եմ համարում, քան միւս անդամոյ այլ զանազան Ընկերութեանց:

Այդ Ընկերութեան անունը Մարդասիրական է կոչվում, որ մարդասէր բառը Աստուծոյն է վերաբերում և մարդիկ էլ նորանից սովորեցին իւրեանց նմաններին սիրել: Նա իւր ճակատին կրումէ մեր բազմավաստակ և բազմերախտ Գրիգոր Լուսաւորչի տիտղոսը, այն Լուսաւորչի, որ Աստուծախօս Մովսէս առաջին մարզարէի պէս, իւր անտանելի տանշանօք բոլոր Հայ ազգը կուտապաշտութենից ազատեց և Քրիստոնէական հաւատով զարդարեց:

Այդ Ընկերութիւնը, եթէ Աստուծ օգնեց, ԿԱՅՍԵՐ հովանաւորեց և բազզը նորա երեսին ժըպտաց, պետք է ժամանակին մեծ մեծ քայլերով դէպի յառաջ վաղի, սերմելով մեր ցիր ու ցան եղած ազգի Խոջալի տղայոց և օրիորդաց բանաւոր այդոյ մեջ լուսաւորութիւն, չեմ ասում միւս բարեմասնութեանց մասին:

Աստուած օրհնէ զեղ զեր անունը, զեր աշխատանքը, զեր տունը և ընտանիքը, առաւելապէս վասն այնր, որ մտել էք այդ Ընկերութեան Անդամոց շաբքը և միաբանական ժողովներ էք կաղմում:

Ս. Վարչականց:

---

Ծանօթական. Խնդրվումէ ներողութիւն Ընդհանարարութիւնից մի քանի երեսում պատահած ապագրական տառասխայների մասին, որոնք անզգուշութեան պատճառաւ սպրդուածեն մի քանի բառերի մէջ:

Գտանձնումնեն և զրամական գումարի մէջ հետեւ եալ սիալները 23 երեսում 9-րդ տողում պէտք է կարգալ 104 բուբն 50 կող. 24 երեսում 7-րդ տողում 84 բուբ. 40 կող.

